

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Փետրվար 2017

ՀՀ և Համաշխարհային տնտեսության
իրադարձություններ



Բովանդակություն

Ռիսկերի մասին նախազգուշացում.....	3
Հաճախակի օգտագործվող հապավումներ	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	5
Իրական հատված.....	6
Պետական հատված.....	9
Դրամավարկային և ֆինանսական հատված.....	11
Արտաքին հատված.....	14
ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ. Դեկտեմբեր 2016.....	17
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	18
ԱՄՆ	19
ԵՄ	25
Զինաստան	28
Ճապոնիա	30
Ապրանքային շուկա	32
Արժույթային շուկա.....	38
Ֆոնդային շուկա	42
ՎԵՆԵՍՈՒԵԼԱ: ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	48
ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ.....	51



Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է դիտարկվի որպես լիարժեք և արժանահավատ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համապատասխան դեպքերում ձգտում է ժամանակին թարմացնել ներկայացված վերլուծական տեղեկատվությունը: Սույն հաշվետվության մեջ պարունակվող տեղեկատվությունը և հետևությունները չպետք է ընկալվեն որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, Դիլինգային Կենտրոն, ՀՀ, Քաղաք Երևան, Պուշկինի 19

Ֆինանսական շուկաների վերլուծաբաններ՝ Թ. Սարգսյան, Ա. Մաթասյան



Հաճախակի օգտագործվող հապավումներ

ԱԳԻ	Արտադրողների գնային ինդեքս
ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՖՊՀ (ԴՊՀ)	Ֆեդերալ (Դաշնային) պահուստային համակարգ
Core	Ցուցիչ, որ ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ
MoM	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ ամսվա նույն ցուցանիշը
PMI	Purchasing Managers' Indice . ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները և այլ կարևոր ցուցանիշներ
QoQ	տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
QE	Քանակական մեղմացում
YoY	տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցվել է նախորդ տարվա նույն ցուցանիշը




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ





Իրական հատված

2016թ հունվար-դեկտեմբերին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշն 2015թ նկատմամբ աճել է 0.5%-ով (2015թ-ին՝ +3.0%): Միայն դեկտեմբերին 2015թ դեկտեմբերի նկատմամբ գրանցվել է 0.1% (YoY) նվազում (2015թ-ին՝ +1.5%), իսկ 2016թ նոյեմբերի ցուցանիշի նկատմամբ աճը կազմել է 17.9% (MoM) (2015թ-ին՝ +21.1%): Այսինքն՝ ի տարբերություն 2015թ դեկտեմբերի, 2016թ նույն ամսում ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը նվազել է, իսկ հունվար-դեկտեմբեր կտրվածքով տնտեսական ակտիվության աճի տեմպերը նվազել են շուրջ 6 անգամ:



Վերջինս պայմանավորված է շինարարության ոլորտի 10.8%, կապի ոլորտի 9.5%, գյուղատնտեսության 5.2%-ով պասիվացմամբ:

Աղյուսակ. 2016թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ (YoY), %

Ոլորտ	Օգ	Մայ	Հկ	Նյ	Պկ	Հվ-Պկ
Արդյունաբերություն	1.3	6.1	2.4	8.8	5.9	6.7
Գյուղատնտեսություն	9.8	-19.5	-29.8	6.3	6.5	-5.2
Հիմնարարություն	-7.2	-17.3	-12.2	-17.5	-10.1	-10.8
Բեռնափոխադրումներ.	99.5	2.1 անգ.	2.0 անգ.	64.4	75.9	85.3
Կապ ¹	-11.9	-13.2	-11.5	-7.6	-17.9	-9.5
Ծառայություններ	10.5	8.6	5.1	8.7	-0.6	7.1
Առևտուր	-0.1	-0.1	0.4	3.8	4.4	1.0

2016թ դեկտեմբերին տարեկան կտրվածքով տնտեսական ակտիվության աճին (YoY) հանգեցրին արդյունաբերության ոլորտում 5.9%, գյուղատնտեսության ոլորտում 6.5% և առևտրի 4.4% աճի տեմպերը: Բեռնափոխադրումների ծավալն

¹ Ռադիոծրագրերի, հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման հեռահաղորդակցության ծառայություններ




ավելացել է 76%-ով: Անկում են գրանցել շինարարության, կապի և ծառայությունների ոլորտները՝ 10.1%, 17.9% և 0.6% (YoY) համապատասխանաբար:

2016թ նոյեմբերի նկատմամբ դեկտեմբերին տնտեսական ակտիվության 17.9%-ով աճի հիմքում տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում գրանցված աճն էր: Բացառություն է կազմել գյուղատնտեսության ոլորտը, որում 11.4% (MoM) պասիվացում է գրանցվել:

Աղյուսակ. 2016թ ՀՀ տնտեսության ճյուղերի աճը/անկումը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ (MoM), %				
Ոլորտ	Մպ	Հկ	Նյ	ԴԳ
Արդյունաբերություն	8.4	-2.5	5.7	6.4
Գյուղատնտեսություն	4.9	-27.2	-24.4	-11.4
Շինարարություն	4.1	0.5	12.4	77.6
Բեռնափոխադրումներ	13.8	7.4	-2.2	2.5
Կապ ¹	-6.9	0.6	-1.5	6.1
Ծառայություններ	5.2	-3	-5.2	10.9
Առևտուր	1.4	-2.4	-1.6	46.4

2016թ հունվար-դեկտեմբերին ՀՀ արդյունաբերության ոլորտի կառուցվածքում 62%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, 20%-ը էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու մատակարարման ոլորտին, 17%-ը՝ հանքագործական արդյունաբերությանն, իսկ մնացած 1%-ը՝ ջրամատակարարման և թափոնների կառավարման ոլորտին: 2016թ ոլորտում 5.7% աճն ապահովվել է բոլոր ենթաճյուղերում գրանցված աճի հաշվին: Մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում գրանցվել է 8.3%,




մշակող արդյունաբերության ոլորտում՝ 7.7%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում՝ 2.0% և ջրամատակարարման և թափոնների վերամշակման ոլորտում՝ 7.0% աճ:


Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը 2016թ հունվար-դեկտեմբերին կազմել է 7.3 մլրդ կՎտ/ժ՝ 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվելով 6.2%-ով:



Գնաճային միջավայր: 2017թ հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.6% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային ապրանքների 7.4% գնաճով: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում աճել են 6.7%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների՝ համապատասխանաբար 0.6% և 0.7% նվազում:




2016թ հունվարի համեմատ 2017թ հունվարին ՄԳԻ-ն նվազել է 0.6%-ով, այդ թվում, պարենային ապրանքների գներն (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) աճել են 1.7%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ նվազել 3.5%-ով, իսկ ծառայությունների սակագները նվազել են 1.8%-ով:



2016թ հունվար-դեկտեմբերին 2015թ նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ ՀՀ սպառողական գների ինդեքսը նվազել է 1.4%-ով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ թվով բարիքներից կազմված զամբյուղի համար հաշվարկված գնային ինդեքսն 2017թ հունվարին 2016թ դեկտեմբերի






նկատմամբ նվազել է 1.0%-ով: Նշենք, որ հանրապետությունում պարենային ապրանքների 7.4% գնաճն իր վրա կրել է առավելապես մրգի՝ 10.9%, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի 49.0% գնաճը: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից գնահատվող ինդեքսը չի ներառում նշված ապրանքախմբերը՝ վերջիններիս գների սեզոնային բնույթի բարձր տատանողականության պատճառով:

2017թ հունվարի 1-ից ՀՀ-ում գործում է գազի, իսկ փետրվարի 1-ից՝ էլեկտրաէներգիայի նվազեցված սակագին: Նոր դրույքաչափերով գազի օգտագործված 1խ/մ-ի դիմաց վճարն 2017թ հունվարի 1-ից կազմում է 139 դրամ՝ նախկին 146.7դրամի փոխարեն: Էլեկտրաէներգիայի սակագինը նվազեցվել է 1.22 դրամով՝ ցերեկային սակագինը սահմանվելով 44.98 դրամ նախկին 46.2-ի դիմաց, գիշերայինը՝ 34.98 դրամ 1կՎտ/ժ-ի համար:

Պետական հատված

ՀՀ Ֆինանսների նախարարության տվյալների համաձայն 2017թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2,902.5 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 2,653.9 մլրդը կազմում է ՀՀ Կառավարության պարտքը (արտաքին՝ 2,103.1 մլրդ դրամ և ներքին՝ 550.8 մլրդ դրամ), և 248.6 մլրդ-ը՝ ՀՀ Կենտրոնական Բանկի արտաքին պարտքը: Ընդ որում՝ ՀՀ Կառավարության պարտքի մոտ 62.4%-ը կազմել են արտաքին վարկերն ու փոխառությունները: Դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքի մեծությունն արդեն գերազանցում է 5.96 մլրդ ԱՄՆ դոլարը: Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2016թ. տարվա վերջի դրությամբ կազմում էր 57.08%, իսկ արդեն 2017թ. հունվարի 31-ի դրությամբ հասել է 57.68%-ի: Վերջինս 2016թ. տարվա առաջին ամիսներին փոքր-ինչ նվազելուց հետո արդեն





մայիսից հատել էր 50%-ի սահմանը՝ շարունակելով աճել հաջորդ ամիսների ընթացքում: Հունվարի 31-ի դրությամբ միայն ՀՀ Կառավարության պարտքի հարաբերակցությունն 2015թ. ՀՆԱ-ին կանգնել է մոտ 53%:


Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 47%:

ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը, %		
	31.12.16	31.01.17
ՀՀ դրամով արտահայտված պարտք	19.3	19.2
Արտարժույթով արտահայտված պարտք	80.7	80.8
<i>այդ թվում՝</i>		
USD	39.5	39.4
SDR	29.3	29.4
EUR	7.0	7.0
JPY	4.4	4.5
AED	0.1	0.1
CNY	0.4	0.4

ՀՀ պետական պարտքի 19.2%-ը արտահայտված է դրամով, 80.8%-ը՝ արտարժույթով, որից 39.4%-ն արտահայտված է ԱՄՆ դոլարով (արժույթային կառուցվածքում առավելագույն կշիռ), 29.4%-ը՝ SDR-ով (մյուս արժույթների համապատասխան կշիռները ներկայացված են աղյուսակով):

Ստորև ներկայացված է ՀՀ պետական պարտքի կառուցվածքն ըստ առանձին միջազգային

կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի:





Նշենք, որ 2016թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 1,154.9 մլրդ ՀՀ դրամ, որից 1,079.6 մլրդ դրամը (մոտ 93.4%-ը) կազմել են հարկային եկամուտները: Պետական բյուջեի հարկային եկամուտներից 2015թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ 28.7%-ով աճել են շրջանառության հարկի ծավալները, 22.7%-ով՝ շահութահարկը, 23%-ով նպատակային սոցիալական վճարները, 22%-ով ակցիզային հարկը, 6.7%-ով եկամտային հարկը, 3.1%-ով հաստատագրված վճարները, 2.8%-ով՝ պետական տուրքերը, 4.1%-ով այլ հարկերը, իսկ մյուս բոլոր հոդվածների գծով տարեկան կտրվածքով գրանցվել են կրճատումներ: Արդյունքում, 2016թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներն 2015թ. համեմատ աճել են 1.1%-ով:


Պետական բյուջեի ծախսերը 2016թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կազմել են 1,427.5 մլրդ ՀՀ դրամ, ինչը մոտ 2.4%-ով գերազանցում է 2015թ. ցուցանիշին:

Պետական բյուջեի դեֆիցիտը 2016թ հունվար-դեկտեմբերին կազմել է 272.5 մլրդ ՀՀ դրամ, որից 89.3 մլրդ-ը ֆինանսավորվել է ներքին, իսկ 183.2 մլրդ-ը՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Դրամավարկային և ֆինանսական հատված

2016թ. դեկտեմբերին ՀՀ ֆինանսական հատվածում գրանցվել է թե՛ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի և թե՛ ներգրավված ավանդների ծավալների աճ: 2015թ. դեկտեմբերի համեմատ ներգրավված ավանդների աճը կազմել է մոտ 23.69%, իսկ 2016թ. նոյեմբերի համեմատ (MoM)՝ մոտ 8.26%: Միննույն ժամանակ, առևտրային բանկերի կողմից

տրամադրված վարկերի ծավալները դեկտեմբերին գրանցել են ամսական (MoM) մոտ





5% և տարեկան (YoY)՝ մոտ 14.94% աճ: Տարեկան կտրվածքով առավելագույն՝ 171.08% աճ են գրանցել ոչ ռեզիդենտների դրամային ավանդների ծավալները, իսկ ամսական (MoM) կտրվածքով՝ ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդների

Աղյուսակ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր և ներգրավված ավանդներ					
	Դեկտեմբեր 2016թ.	Դեկտեմբեր 2015թ.	Նոյեմբեր 2016թ.	MoM	YoY
	մլրդ. դրամ	մլրդ. դրամ	մլրդ. դրամ	%	%
ԱՎԱՆԴ	2,413.36	1,951.11	2,229.17	8.26	23.69
Ընդամենը Արտարժույթ. Ավանդներ	1,558.12	1,357.26	1,407.86	10.6	14.80
Ընդամենը Դրամային Ավանդներ	855.24	593.85	821.30	4.13	44.02
Ռեզիդենտների Դրամային Ավանդներ	698.61	536.07	671.85	3.98	30.32
Ոչ Ռեզիդենտների Դրամային Ավանդներ	156.63	57.78	149.45	4.80	171.0
Ռեզիդենտների Արտարժույթային և Ավանդներ	1,063.21	965.78	1,027.84	3.44	10.09
Ոչ Ռեզիդենտների Արտարժույթ. Ավանդներ	494.91	391.48	380.02	30.2	26.42
ՎԱՐԿ	2,436.08	2,119.51	2,320.00	5.00	14.94
Ընդամենը Դրամային Վարկեր	900.57	727.52	868.99	3.63	23.79
Ընդամենը Արտարժույթային և Վարկեր	1,535.51	1,391.99	1,451.01	5.82	10.31
Ռեզիդենտների Դրամային Վարկեր	746.31	680.91	715.89	4.25	9.61
Ոչ Ռեզ. Դրամային Վարկեր	154.26	46.61	153.10	0.75	230.9
Ռեզ. Արտարժույթային և Վարկեր	1,370.52	1,324.33	1,366.44	0.30	3.49
Ոչ Ռեզ. Արտարժույթային և Վարկեր	164.99	67.66	84.57	95.0	143.8

ծավալները՝ 30.23%: Ինչ վերաբերում է տրամադրված վարկերին, ապա 2015թ. դեկտեմբերի համեմատ առավելագույն տոկոսային աճը գրանցել են ոչ ռեզիդենտների դրամային վարկերը (ավելի քան 230%), իսկ 2016թ. նոյեմբերի համեմատ՝ ոչ ռեզիդենտների արտարժույթային վարկերը (ավելի քան 95%): Հարկ է նշել, սակայն, որ ընդհանուր տրամադրված վարկերի մեջ առավելագույն կշիռ են կազմում ՀՀ ռեզիդենտների արտարժույթային վարկերը (մոտ 63%), իսկ ներգրավված ավանդների մեջ՝ ռեզիդենտների արտարժույթային ավանդները (մոտ 44%): 2016թ. 4-րդ քառորդի վերջում գրանցվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված

ժամկետանց վարկերի ծավալների կրճատում՝ մոտ 30.5%-ով: Տարվա երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ժամկետանց վարկերի ծավալը կազմում էր մոտ 46մլրդ



ՀՀ դրամ, մինչդեռ արդեն դեկտեմբերի վերջի դրությամբ վերջինս կրճատվել է մինչև մոտ 32 մլրդ դրամ:

ՀՀ ֆինանսական շուկայում շարունակում են նվազել թե՛ կարճաժամկետ և երկարաժամկետ ավանդների և թե՛ կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկերի տոկոսադրույքները: Հիշեցնենք, որ 2016թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն արդեն դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները նվազեցրել է 8 անգամ՝ ընդհանուր 2.5 կետով: 2016 թ. դեկտեմբերի 27-ի իր վերջին նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց 0.25 տոկոսային կետով նվազեցնել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 6.25%, լոմբարդային ռեպոների և բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 7.75% և 4.75%: ԿԲ 2017թ. առաջին նիստում որոշվել է ևս 0.25 կետով նվազեցնել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանելով 6%, լոմբարդային ռեպոների և բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 7.5% և 4.5%:

ԿԲ տվյալներով 2016 թվականի դեկտեմբերին նոյեմբերի համեմատ մինչև մեկ տարի ժամկետով դրամային վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.59 կետով՝ մինչև 15.33 տոկոս, իսկ դոլարով՝ 0.42 տոկոսային կետով՝ մինչև 9.32 տոկոս: Ավելի քան մեկ տարի ժամկետով դրամային վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.58 կետով՝ մինչև 16.01 տոկոս և դոլարային վարկերի տոկոսադրույքները՝ 0.68 տոկոսային կետով՝ մինչև 9.79 տոկոս: 1.04 և 0.29 տոկոսային կետով նվազել են մինչև մեկ տարի ժամկետայնությամբ դրամային և դոլարային ավանդների տոկոսադրույքները՝ համապատասխանաբար կազմելով 8.71% և 4.83%: Մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ դրամային և դոլարային ավանդների տոկոսադրույքները դեկտեմբերին ամսական կտրվածքով կրճատվել են համապատասխանաբար 0.28 և 0.09 տոկոսային կետով՝ կազմելով 12.38% և 6.1%:




Արտաքին հատված

2016թ հունվար-դեկտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 5.07 մլրդ ԱՄՆ դոլար (2.4 տրլն դրամ)՝ տարեկան կտրվածքով աճելով շուրջ 7.4%-ով:

Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների տարեկան աճը կազմել է 20.0%՝ հասնելով մոտ 1.8 մլրդ դոլարի (855.9 մլրդ դրամ), իսկ ներմուծման ծավալներն ավելացել են 1.6%-ով՝ մինչև 3.3մլրդ ԱՄՆ դոլար (1.6տրլն դրամ):

ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն 2015թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ 2016թ նույն ժամանակահատվածում բարելավվել է մոտ 14%-ով՝ -1.75մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով -1.51մլրդ ԱՄՆ դոլարի:



Աղյուսակ. ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ, 2016թ			
	Դեկտեմբեր	Դեկտեմբեր	Հվ-դկ
	Փոփոխությունը 2015թ դեկտեմբերի նկատմամբ, %	Փոփոխությունը 2016թ նոյեմբերի նկատմամբ, %	Փոփոխությունը 2015թ հվ-դկ-ի նկատմամբ, %
Արտահանում	5.5	-8.5	20.0
Ներմուծում	-5.0	-5.4	1.6
Առևտրաշրջանառություն	-1.8	-6.4	7.4

Միայն 2016թ դեկտեմբերին 2015թ նույն ամսվա նկատմամբ ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվել է 1.8%-ով (YoY)՝ մինչև 480.3մլն ԱՄՆ դոլար: Վերջինիս կազմում արտահանումն ավելացել է 5.5%-ով(YoY)՝ կազմելով 155.3մլն դոլար և հաջորդելով նոյեմբերյան 4.3% աճին, իսկ ներմուծումը, նախորդ ամսում 7.5%-ով(YoY) աճելուց հետո, դեկտեմբերին նվազել է 5.0%-ով(YoY)՝ կազմելով 325.0 մլն դոլար:

2016թ նոյեմբերի նկատմամբ դեկտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվել է 6.4%-ով(MoM)՝ հաջորդելով նոյեմբերյան 6.4%-ոց աճին (MoM): Այդ թվում՝ արտահանման ծավալները նոյեմբերյան 4.3% աճից





հետո դեկտեմբերին կրճատվել են 8.5%-ով(MoM), իսկ ներմուծման ծավալները նոյեմբերին 7.5%-ով աճելուց հետո դեկտեմբերին նվազել են 5.4%-ով (MoM):

Առևտրային հաշվեկշռի բացասական սալըոն դեկտեմբեր ամսին նվազել է 2.3%-ով՝ -173.8մլն ԱՄՆ դոլարից հասնելով -169.7մլն ԱՄՆ դոլարի:

Եթե դիտարկենք տարեկան կտրվածքով, ապա տարվա սկզբի նկատմամբ տարվա վերջին ՀՀ արտաքին առևտրի բացասական սալըոն խորացել է, թեև մարտ-հուլիս ժամանակահատվածում

անընդմեջ բարելավում էր գրանցվում: 2016թ հունվարի ցուցանիշի նկատմամբ դեկտեմբերին բացասական սալըոն ավելացել է շուրջ 2.5 անգամ՝ 67մլն ԱՄՆ դոլարից հասնելով 169.7մլն ԱՄՆ դոլարի:



Նախորդ տարվա նկատմամբ 2016թ հունվար-դեկտեմբերին ՀՀ արտահանման ծավալների 20%-ոց աճն առավել մեծ չափով պայմանավորված էր «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (143.3 մլն դոլարով), «Պատրաստի սննդի արտադրանք» (93 մլն դոլարով), «Բուսական ծագման արտադրանք» (31.5 մլն դոլարով) և «Մանածագործական իրեր» (25 մլն դոլարով) ապրանքախմբերին պատկանող ապրանքների արտահանման ծավալների աճով:




Արտահանման ծավալների առավել մեծ կրճատում են գրանցել «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (7 մլն դոլարով), «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» (11 մլն դոլարով) և «Հանքահումքային արտադրանք» (7մլն դոլարով) ապրանքախմբերը:

Նույն ժամանակահատվածում ներմուծման ծավալների 1.6%-ոց աճն ապահովել են «Մանածագործական իրեր» (61 մլն դոլարով), «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (57.6 մլն դոլարով), «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (43.4 մլն դոլարով) և «Քիմիայի և դրահետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» (26.3 մլն դոլարով) ապրանքախմբերը: Առավելագույն կրճատումը գրանցվել է «Հանքահումքային արտադրանք» (48 մլն դոլարով), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (31.5 մլն դոլարով) և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (31 մլն դոլարով) ապրանքախմբերի հաշվին:

2016թ դեկտեմբերին հայկական բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ՀՀ փոխանցված դրամական միջոցների ծավալը կազմել է 211.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա նկատմամբ գրանցելով շուրջ 71% (MoM) աճ: 2015թ նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը կազմել է 26%(YoY): Սա 2014թ օգոստոսից հետո գրանցված առավելագույն ցուցանիշն է: Նախորդ ամսվա նկատմամբ 80%-ով աճել է նաև դրամական միջոցների արտահոսքը՝ հասնելով 109մլն ԱՄՆ դոլարի: Արդյունքում, դրամական միջոցների զուտ ներհոսքը նոյեմբերի նկատմամբ դեկտեմբերին աճել է շուրջ 80.5%-ով՝ կազմելով 102.5մլն ԱՄՆ դոլար: Նախորդ ամսվա նկատմամբ ավելացել են ինչպես ՌԴ-ից (32.2%-ով), այնպես էլ ԱՄՆ-ից (63.9%-ով)

կատարված փոխանցումները՝ կազմելով համապատասխանաբար 66.2 և 11.6 մլն ԱՄՆ դոլար:

Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ 2016թ դեկտեմբերին դրամական միջոցների զուտ ներհոսքն ավելացել է 53%-ով (YoY)՝ աճ գրանցելով ինչպես ՌԴ-ից (68.2%-ով), այնպես էլ ԱՄՆ-ից (57.6%-ով) կատարվող փոխանցումների գծով:





ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ. Դեկտեմբեր 2016

Ցուցանիշ	2016թ դկ.	Փոփոխություն		2016թ հվ- դկ.	Փոփոխություն
		YoY(%)	MoM(%)		YoY (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %	X	-0.1	17.9	X	0.5
Արդյունաբերական արտադրանք, մլրդ դրամ	143.4	5.9	6.4	1,429.0	6.7
Գյուղատնտեսական արտադրանք, մլրդ դրամ	71.3	6.5	-11.4	907.5	-5.2
Շինարարության ծավալ, մլրդ դրամ	77.6	-10.1	77.6	397.7	-10.8
Առևտրաշրջանառություն, մլրդ դրամ	283.8	4.4	46.4	2,233.6	1.0
Ծառայությունների ծավալ, մլրդ դրամ	120.7	-0.6	10.9	1,265.2	7.1
ՍԳԻ. Դեկտեմբեր, %	X	-1.1	1.1	X	-1.4
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	102.87	9.0	17.5	1,154.9	0.7
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	182.0	5.3	63.8	1,427.5	2.4
Սալդո (+/-), մլրդ դրամ	-61.1	-1.3	+7.4անգ	-272.5	11.2
Արտաքին առևտրաշրջանառ., մլն ԱՄՆ դոլար	480.3	-1.8	-6.4	5,075.3	7.4
արտահանում	155.3	5.5	-8.5	1,782.9	20.0
ներմուծում	325.0	-5.0	-5.4	3,292.4	1.6
Դրամական միջոցների զուտ ներհոսք, մլն ԱՄՆ դոլար	102.5	-53.3	80.5	X	X
ՀՀ պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	5,934.7	6.0	6.0	X	X
արտաքին պարտք	4,798.3	6.7	6.7	X	X
ներքին պարտք	1,136.5	3.2	3.2	X	X
	2016թ I եռամսյակ		YoY		QoQ
ՀՆԱ, մլն դրամ	897,818.4		4.3		-43.0
	2016թ II եռամսյ.				
	1 127,723.3		1.6		24.1
	2016թ III եռամսյ.				
	1 518,338.5		-2.6		39.4
ԴՎՔ գործիքների տոկոսադրույթներ	Դրամական միջ. ներգր.		Լոմբարդային ռեպո		Վերաֆին-ման
	4.75		7.75		6. 25
14.02.2017թ-ից՝	4.5		7.5		6.0



Փետրվար 2017

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ





2016թ վերջին կայացած ԱՄՆ նախագահական ընտրություններից հետո Դ.Թրամփի ադմինիստրացիայի կողմից խոստացված հարկաբյուջետային խթանման միջոցառումների իրականացման ֆոնին ինֆլյացիայի, հետևաբար՝ առավել բարձր տոկոսադրույքների և պոտենցիալ առավել բարձր տնտեսական աճի սպասումներ էին ձևավորվել: Մինչ հունվարի 20-ին նախագահի երդմնակալության արարողության կայացումը, սակայն, տնտեսական քաղաքականության հետագա փոփոխությունների վերաբերյալ Դ.Թրամփի կողմից մանրամասներ չտրամադրելու հետևանքով ԱՄՆ տնտեսական հեռանկարի շուրջ ձևավորվեց անորոշություն, իսկ ԱՄՆ նախագահությունը պաշտոնապես ստանձնելուց հետո Դ.Թրամփը ստորագրեց մի շարք հանձնարարագրեր, որոնք ընդգծում են նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության առավելապես պրոտեկցիոնիստական բնույթը: Վերջինիս հնարավոր ազդեցությունն ԱՄՆ տնտեսության վրա միանշանակ գնահատել դեռևս հնարավոր չէ և իր մեջ ռիսկեր է պարունակում:

Այսպես, Դ.Թրամփի ադմինիստրացիան իր քաղաքականության տնտեսական բաղադրիչը մեկնարկեց ԱՄՆ-ի՝ Տրանսխաղաղովկիանոսյան առևտրային համագործակցությունից դուրս գալով: Ադմինիստրացիայի կողմից հրապարակված փաստաթղթում նշվում է, որ այս քայլը, նպաստելով երկրի արդյունաբերության ոլորտի վերականգնմանը, դրական կանդրադառնա ամերիկյան տնտեսության վրա: Նշենք, որ Դ.Թրամփն իր քաղաքականության առաջնային կետն է համարում արդյունաբերության ոլորտում աճի խթանումը: Հրապարակված պաշտոնական փաստաթղթում նշվում է, որ ԱՄՆ-ն այսուհետ կմասնակցի միջազգային առևտրային այնպիսի համաձայնագրերի, որոնք կնպաստեն ԱՄՆ տնտեսական աճին, աշխատատեղերի ստեղծմանն ու երկրի տնտեսապես ծանր վիճակում գտնվող շրջանների տնտեսության ակտիվացմանը: Դ.Թրամփը նաև նշեց, որ տնտեսական ոլորտում փոփոխությունների գծով հաջորդ քայլը կլինի Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրին (NAFTA) երկրի մասնակցության վերանայումը: Հիշեցնենք, որ Տրանսխաղաղովկիանոսյան համագործակցությունը ենթադրում է Ասիախաղաղովկիանոսյան տարածաշրջանի 12 երկրների միջև ազատ առևտրի գոտու ստեղծում: Վերջինիս ուղղությամբ ԱՄՆ-ն ու Ճապոնիան բավականին տևական ժամանակ բանակցություններ էին վարում:

Հունվարի 23-ին տեղի ունեցած իր ելույթում ԱՄՆ նախագահ Դ.Թրամփը, դիմելով արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներին, հայտարարել է, որ, կիրացնի իրենց արտադրությունն ԱՄՆ տարածքից դուրս բերած և արտադրանքն ԱՄՆ ներկրող ընկերությունների նկատմամբ ներկրման հարկեր կիրառելու իր



որոշումը: Այդպիսով կիսթանվի ԱՄՆ-ում արտադրության կազմակերպումն ու նոր աշխատատեղերի ավելացումը:

Հունվարի 31-ին իրենց ելույթներում ԱՄՆ նախագահ Դ.Թրամփն ու իր տնտեսական հարցերով խորհրդականն, անդրադառնալով ԱՄՆ գլխավոր առևտրային գործընկեր երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի, Ճապոնիայի և Չինաստանի արժույթային քաղաքականությանը, վերջիններիս քննադատեցին, նշելով, որ այդ երկրներն իրենց ազգային արժույթների փոխարժեքները նպատակաուղղված ցածր մակարդակում են պահում, ինչը բացասաբար է անդրադառնում ԱՄՆ-ի վրա: Նշված հայտարարություններից հետո սպասելի է դառնում այն, որ ԱՄՆ նախագահական նոր ադմինիստրացիան խրախուսելու է դոլարի ցածր փոխարժեքը:

ԱՄՆ նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության տնտեսական հետևանքների վերաբերյալ մտահոգություններ առաջացրեց ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի՝ Մեքսիկայի հետ ԱՄՆ սահմանին պատի կառուցման և մահմեդական յոթ երկրների քաղաքացիների մուտքն ԱՄՆ արգելելու մասին որոշումները: Վերջինս, սակայն, նշենք, որ չի հաստատվել երկրի Գերագույն դատարանի կողմից:

Դ.Թրամփի կողմից ստորագրված հաջորդ կարգադրությունը, որի հնարավոր ազդեցությունն ինչպես ԱՄՆ, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա էական ռիսկեր է պարունակում, ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող «Դոդդ-Ֆրանկ»-ի օրենքը վերանայելու վերաբերյալ է: Վերջինս նախագահի կողմից ստորագրվեց փետրվարի 3-ին: Օրենքն ընդունվել էր 2010թ-ին՝ նպատակ ունենալով կանխարգելել 2008թ սկիզբ առած ֆինանսական ճգնաժամի կրկնումը հետագայում և բանկերի ու այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ սահմանում է առավել խիստ կարգավորումներ: Նշված օրենքի սահմաններում են ԱՄՆ-ում ներդրվել «Բազել 3» միջազգային համաձայնագրի պայմանները՝ այդ թվում պահուստների՝ բանկային կապիտալի առնվազն 8% սահմանաչափի, սթես թեստերի անցկացման, ավանդական և ներդրումային գործառնությունների առանձնացման վերաբերյալ: Հատկապես վերջինը սահմանափակեց վարկային կազմակերպությունների՝ ածանցյալներով գործառնություններ իրականացնելու հնարավորությունը: Նշենք, որ մինչ այդ Դ.Թրամփը նախատեսում էր ամբողջությամբ կասեցնել օրենքի գործողությունը՝ որպես վարկավորման աճը խոչընդոտող օրենքի, սակայն որոշում կայացվեց սահմանափակվել միայն դրա վերանայմամբ: Նշենք, սակայն, որ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչներից շատերն Ուոլ Սթրիթի առավել խիստ կարգավորման կողմնակիցն են, իսկ ԴՊՀ տվյալներով ամերիկյան խոշորագույն



բանկերի կողմից բիզնեսի վարկավորման ծավալներն 2017թ հունվարի վերջի դրությամբ կազմել են ռեկորդային 1.1 տրլն ԱՄՆ դոլար, իսկ տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը կազմել է 1.4 տրլն ԱՄՆ դոլար, ինչը միայն չնչին չափով է զիջում 2008թ կեսերի ցուցանիշին: Նշենք, որ ամերիկյան ֆինանսական համակարգի կարգավորումների կտրուկ թուլացումն իր մեջ էական ռիսկեր է կրում նաև այլ երկրների ֆինանսական համակարգերի համար, ինչը հնարավոր է՝ շղթայական ռեակցիայով անդրադառնա նաև ամերիկյան շուկայի վրա՝ արտահայտվելով գլոբալ մասշտաբի ճգնաժամային երևույթներով:

Ինչ վերաբերում է հարկային ոլորտում կատարվելիք բարեփոխումներին, որոնց շուրջ մանրամասների ստացումը հատկապես կարևորվում է շուկայի մասնակիցների կողմից, փետրվարի 9-ին ավիափոխադրումների ոլորտի ներկայացուցիչների հետ իր հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփը նշեց, որ մոտակա երկու-երեք շաբաթների ընթացքում հանդես կգա հարկային համակարգի հետ կապված «ֆենոմենալ» հայտարարությամբ: Դ.Թրամփը նաև հավելեց, որ կվերացվեն կարգավորումները: Սակայն դեռևս պարզ չէ, թե արդյոք նշված փոփոխությունները վերաբերում են միայն ավիափոխադրումների ոլորտին, թե ԱՄՆ տնտեսության ոլորտների առավել լայն շրջանակի:


Նշենք, որ ԴՊՀ դեկտեմբերյան նիստում, երբ բազային տոկոսադրույքը բարձրացվեց 0.25 կետով՝ մինչև 0.75%, քննարկվեց 2017թ տոկոսադրույքը ևս երեք անգամ բարձրացնելու հարցը: ԱՄՆ տնտեսական հեռանկարի շուրջ պարզության բացակայության պայմաններում, սակայն, վերջինիս հավանականությունը նվազում է: ԴՊՀ վերջին նիստում՝ փետրվարի 1-ին հրապարակվեց ԴՎՔ տոկոսադրույքն անփոփոխ՝ 0.5-0.75% միջակայքում թողնելու որոշումը:

Վերոնշյալի ֆոնին, հրապարակված վերջին տվյալների համաձայն 2017թ հունվարին և փետրվարին ԱՄՆ-ում սպառողական վստահության մակարդակը նվազել է վերջին 15 տարիների մաքսիմումից: Վերջինս առավելապես բացատրվում է հետընտրական սկզբնական ժամանակահատվածում վստահության կտրուկ աճից հետո «նորմալ» պայմաններին վերադարձով: Սկզբնական շրջանում տրամադրվածությունների կտրուկ բարելավումը պայմանավորված էր Դ.Թրամփի կողմից հարկային նվազեցումների, կարգավորումների թեթևացման, ձեռներեցության և, առհասարակ, ողջ տնտեսության համար բարենպաստ քաղաքականության գործողությունների իրականացման սպասումներով: Ներկայումս, նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության անորոշության պայմաններում սպառողների շրջանում աճում է զգուշավորությունը: Սպառողական վստահության ինդեքսը դեկտեմբերյան 113.3 գործակցից հունվարին նվազել է մինչև 111.8: Ընդ որում, դեկտեմբերյան գործակցիցը վերանայվել է 0.4 կետով նվազեցման ուղղությամբ:




Սպառողական սպասումների և տրամադրվածությունների զսպմանն են մատնանշում նաև Միջիգանի համալսարանի կողմից գնահատվող համանուն ինդեքսները: Վերջիններիս ցուցանիշները, 2017թ փետրվարին արված գնահատումների համաձայն, նվազել են 90.3-ից մինչև 85.7 գործակիցն, ու 98.5-ից մինչև 95.7 գործակիցը համապատասխանաբար:

ԱՄՆ տնտեսական իրադրության ոչ միանշանակ պատկեր են ցույց տալիս նաև վերջին ամսում հրապարակված մակրոտնտեսական ցուցանիշները: Մասնավորապես, 2016թ չորրորդ քառորդի համար հրապարակված ՀՆԱ-ի ցուցանիշը նախորդ քառորդի նկատմամբ գրանցել է ընդամենը 1.9%-ոց աճ՝ հաջորդելով երրորդ քառորդի 3.5%-ոց աճի ցուցանիշին: Տվյալը, սակայն, բարձր է տարվա առաջին և երկրորդ քառորդների ցուցանիշներից՝ 1.1% և 1.4% համապատասխանաբար:




ԱՄՆ Մարդահամարի բյուրոյի տվյալներով 2016թ դեկտեմբերին մանրածախ առևտրի ծավալները երկրում նախորդ ամսվա նկատմամբ ավելացել են 0.6%-ով (MoM)՝ 0.4 կետով գերազանցելով նոյեմբերյան աճի ցուցանիշը: Աճի բարձր տեմպը պայմանավորված էր ավտոմեքենաների



վաճառքների ռեկորդային բարձր ցուցանիշներով: Մանրածախ առևտրի ծավալների Core ցուցանիշը, որը չի ներառում ավտոմեքենաների վաճառքի տվյալները, աճել է 0.2%-ով (MoM)՝ զիջելով նախորդ ամսվա 0.3% աճի ցուցանիշին:




ԱՄՆ Աշխատանքի դեպարտամենտի հաղորդմամբ 2016թ դեկտեմբերին երկրի սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 0.3%-ով(MoM)՝ հաջորդելով նոյեմբերին գրանցված 0.2%(MoM)-ին: Տարեկան կտրվածքով աճը կազմել է 2.1%(YoY)՝ նոյեմբերյան 1.7%-ից հետո, ինչն 2014թ հունիսից հետո գրանցված առավելագույն աճն է:



Բազային ինֆլացիան, որը չի ներառում սննդամթերքի և էներգակիրների գները, դեկտեմբերին աճել է 2.2%-ով(YoY), իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.3%-ով(MoM):


Սպառողական ապրանքների գների բազային (Core) ինդեքսը, որը չի ընդգրկում սննդամթերքի և էներգակիրների գները, դեկտեմբերին ամսական կտրվածքով աճել է 0.1%-ով (MoM)՝ ակտիվանալով նախորդող ամսվա զրոյական ցուցանիշից: 2015թ նույն ամսվա նկատմամբ ինդեքսն աճել է 1.7%-ով՝ պահպանելով նոյեմբերյան ցուցանիշը: Նշենք, որ վերջինս, իր հերթին, վերանայվել է 0.1 կետով աճի ուղղությամբ և բավականին մոտ է ԴՊՀ նպատակային 2% գնաճի ցուցանիշին:

Գնաճի ակտիվացումը պայմանավորված է ԱՄՆ տնտեսական աճով և աշխատանքի շուկայի կայունացմամբ: Նշենք, որ Տնտեսական վերլուծությունների բյուրոյի հաղորդմամբ բնակչության անձնական եկամուտներն 2016թ դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ ավելացել են 0.3%-ով (MoM)՝ գերազանցելով նոյեմբերյան 0.1% աճի ցուցանիշը: Անձնական ծախսերն, իրենց հերթին, ավելացել են 0.5%-ով (MoM)՝ գերազանցելով նոյեմբերի 0.2% աճի ցուցանիշը:





Աշխատանքի վիճակագրության բյուրոյի տվյալների համաձայն հունվարին երկրում ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվն ավելացել է 227 հզ-ով՝ հաջորդելով դեկտեմբերյան 157 հզ-ով աճի ցուցանիշին և գերազանցելով սպասումները: Միննույն ժամանակ, սակայն, միջին ժամային աշխատավարձն աճել է առավել ցածր տեմպերով, քան նախորդող ամսում (0.2%)՝ 0.1% (MoM) սպասված 0.3%-ի (MoM) փոխարեն: Իսկ գործազրկության մակարդակն,



իր հերթին, աճել է երկրորդ ամիսը շարունակ՝ աճը կազմելով 0.1 կետ՝ 4.7%-ից հասնելով 4.8%-ի: Գործազրկության մակարդակի աճն ու աշխատավարձերի աճի տեմպերի կրճատումը կնպաստեն ԴՊՀ-ի՝ ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման հարցում առավել զուսպ լինելուն:

ԱՄՆ Ռիեյթորների ազգային ասոցիացիայի տվյալների համաձայն երկրորդային շուկայում վաճառքի գործընթացում գտնվող անշարժ գույքի թիվը դեկտեմբերին, նախորդ երկու ամիսներին նվազելուց հետո, աճել է 1.6%-ով (MoM): Մինչդեռ, Մարդահամարի բյուրոյի տվյալներով՝ նորակառույց բնակելի անշարժ գույքի վաճառքի ծավալները դեկտեմբերին նվազել են 10.4%-ով (MoM), իսկ երկրորդային շուկայում վաճառքի ծավալների աճը զիջել է նախորդ ամսվա ցուցանիշին (5.65 մլն)՝ կազմելով 5.5 մլն:

Փաստորեն, երկրի աշխատանքի շուկան դեռ մոտ չէ գերտաքացման վիճակին, անշարժ գույքի շուկայում աճի տեմպերը նախորդ ամիսների համեմատ զսպվել են, իսկ Տնտեսության հետագա ակտիվացում և ներդրումների աճ կգրանցվի նոր ադմինիստրացիայի քաղաքականության անորոշության վերացման հետ մեկտեղ:




ԵՄ

2016թ. 4-րդ եռամսյակում 2008թ.-ից հետո առաջին անգամ ԵՄ-ն ՀՆԱ աճի տեմպերով գերազանցեց ԱՄՆ-ին: Գրանցվել է Եվրագոտու ՀՆԱ-ի 1.8% աճ, ինչի արդյունքում 2016թ. տարեկան աճը կազմել է 1.7% (Եվրամիության ՀՆԱ-ն աճել է 1.9%-ով): ԱՄՆ ՀՆԱ աճը 2016թ. կազմել է 1.6%, ինչը վերջին 6 ամիսների նվազագույն ցուցանիշն է: Նշենք, սակայն, որ Արժույթի Միջազգային Հիմնադրամի վերջին տնտեսական բյուլետենում հրապարակված տվյալների համաձայն (World Economic Outlook) կանխատեսվում է 2017թ. ընթացքում ԱՄՆ ՀՆԱ-ի՝ 2.3%, իսկ ԵՄ ՀՆԱ-ի՝ 1.6% աճ (2018թ. համար՝ ԱՄՆ-ը(+2.5%), ԵՄ-ը(+1.6%)):

Եռամսյակային (QoQ) կտրվածքով 2016թ. 4-րդ եռամսյակում գրանցվել է ԵՄ ՀՆԱ 0.5% աճ, ինչը ևս գերազանցել է թե՛ նախորդ ամսվա և թե՛ կանխատեսվող 0.4% աճի ցուցանիշը:

Eurostat-ի տվյալներով դրական տեղաշարժեր են գրանցվել նաև ԵՄ աշխատանքի շուկայում. 2016թ. դեկտեմբերին գործազրկության մակարդակը հասել է 2009թ. մայիսից հետո նվազագույն արժեքի՝ 9.6%, միևնույն ժամանակ, արդեն զգալիորեն արագացել են ինֆլյացիայի տեմպերը, մասնավորապես, 2017թ. հունվարին սպառողական գները ԵՄ-ում աճել են 1.8%-ով (2013թ. փետրվարից հետո




կազմել է 1.1%):

գրանցված առավելագույն արժեք)՝ չնայած, որ կանխատեսվում էր ընդամենը 1.5%-ով աճ: Սպառողական գների նման աճին հատկապես նպաստել են էներգակիրների և սննդամթերքի գների աճի տեմպերի արագացումը (նախորդ ամսվա 0.5%-ից հետո արդեն հունվարին



2016թ դեկտեմբերին ամսական (MoM) կտրվածքով գրանցվել է Գերմանիայի ներմուծման գների 1.9% աճ՝ չնայած, որ նախորդ ամսվա 0.7%-ից հետո կանխատեսվում էր ընդամենը 1.3%-ով աճ: Տարեկան (YoY) կտրվածքով ևս ներմուծման գների աճը գերազանցել է սպասումները՝ նախորդ ամսվա 0.3%-ի և կանխատեսվող 2.7%-ի փոխարեն կազմելով 3.5%: Ըստ ԵՄ առանձին երկրների՝ առավելագույն գնաճը գրանցվել է Իսպանիայում՝ 3%, ինչը գերազանցում է նույնիսկ նպատակային 2%-ը: Չնայած, որ ԵՄ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերջին արդյունքները խոսում են բավականին դրական տեղաշարժերի մասին, սակայն, այնուամենայնիվ, ընդհանուր ԵՄ գնաճային սպասումները դեռևս բավականին թույլ են, առկա են մի շարք քաղաքական և տնտեսական անորոշություններ,

որոնք նույնիսկ վերջին ամիսներին առավելապես դրական տնտեսական ցուցանիշների հրապարակման պայմաններում բարձրացնում են ԵԿԲ կողմից քանակական մեղմացման ծրագրի երկարաձգման ու խթանող քաղաքականության պահպանման հավանականությունը:



որոնք նույնիսկ վերջին ամիսներին առավելապես դրական տնտեսական ցուցանիշների հրապարակման պայմաններում բարձրացնում են ԵԿԲ կողմից քանակական մեղմացման ծրագրի երկարաձգման ու խթանող քաղաքականության պահպանման հավանականությունը:

Markit-ի կողմից հրապարակված նախնական տվյալների համաձայն ԵՄ վերամշակող արդյունաբերության ոլորտի PMI-ն (Purchasing Managers' Index) գրանցել է 55.1 արժեք՝ չնայած, որ կանխատեսվում էր 54.8, իսկ նախորդ ամիս փաստացի արժեքը կազմել էր ընդամենը 54.9: Սա նշանակում է որ արդյունաբերության ոլորտում նախնական տվյալների համաձայն հունվար ամսվա ընթացքում գրանցվել է ակտիվության որոշակի աճ: Նշենք, որ 2016թ. նոյեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալները ԵՄ-ում գրանցել էին տարեկան (YoY) 3.2% և ամսական (MoM) 1.5% աճ՝ երկու դեպքում էլ գերազանցելով սպասումները: Ծառայությունների ոլորտի PMI-ն կազմել է 53.7: Արդյունաբերության և ծառայությունների ոլորտների բաղադրյալ PMI-ն հունվարին որևէ փոփոխություն չի կրել՝ կազմելով 54.4:



2017թ. հունվարին ZEW հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված ԵՄ-ում և Գերմանիայում տնտեսական տրամադրվածությունների ինդեքսները գրանցել են կանխատեսվածից ցածր արժեքներ, սակայն միևնույն ժամանակ գերազանցել են նախորդ ամսվա տվյալները: Մասնավորապես, Գերմանիայի համար հաշվարկված ZEW ինդեքսը կանխատեսվող 18.3-ի փոխարեն գրանցել է 16.6 արժեք, ինչը, սակայն, գերազանցում է դեկտեմբերյան 13.8 արժեքը: Ընդհանուր ԵՄ համար արդեն կանխատեսվում էր ինդեքսի՝ 24.2 արժեք, մինչդեռ փաստացի տվյալը ցույց տվեց օպտիմիստական տրամադրվածությունների աճ՝ կանխատեսվածից ավելի փոքր չափերով (ինդեքսը կազմել է 23.2 գործակից): Նշենք, որ նախորդ ամիս տրամադրվածությունների ինդեքսը կազմել էր ընդամենը 18.1 գործակից: Միևնույն ժամանակ Գերմանիայի ընթացիկ պայմանների ինդեքսը գրանցել է 77 .3 արժեք, ինչը զգալիորեն գերազանցում է նախորդ ամսվա տվյալը:

Մեծ Բրիտանիայի Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների համաձայն երկրի աշխատանքի շուկայի՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված տնտեսական ցուցանիշներն ընդհանուր առմամբ դրական բնույթ էին կրում: Մասնավորապես, միջին եկամուտներն առանց բոնուսների նոյեմբերին գրանցել են 2.7% աճ՝ չնայած, որ նախորդ ամիս աճը կազմել էր 2.6% և աճի տեմպերի որևէ փոփոխություն չէր կանխատեսվում: Միջին եկամուտները՝ բոնուսների հետ միասին, աճել են 2.8%-ով կանխատեսվող և նախորդ 2.6%-ի փոխարեն: Չնայած, որ նոյեմբերի տվյալներով Մեծ Բրիտանիայում գործազրկության մակարդակը չէր փոփոխվել՝ կազմելով 4.8%, այնուամենայնիվ արդեն դեկտեմբերյան տվյալներով հայտնի է, որ տեղի է ունեցել գործազուրկների թվի 10.1 հազարով կրճատում (կանխատեսվում էր 5 հազարով աճ): Նախորդ ամսվա 2.4 հազարով աճի ցուցանիշը վերանայվել է նվազման ուղղությամբ, ինչի արդյունքում նոյեմբերին գործազուրկների թվի աճը կազմել է ընդամենը 1.3 հազար:

Դրական տեղաշարժեր են գրանցվել Մեծ Բրիտանիայի արդյունաբերության ոլորտում. նոյեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալները տարեկան կտրվածքով աճել են 2%-ով այն դեպքում, երբ կանխատեսվում էր ընդամենը 0.6%-ով աճ, իսկ ամսական կտրվածքով (MoM) աճը կազմել է 2.1%՝ կանխատեսվող 0.8% աճի և նախորդ ամսվա 1.1%-ով կրճատման փոխարեն: Վերամշակող արդյունաբերության ոլորտում 2016թ. հոկտեմբերին գրանցված 1% անկումից հետո արդեն նոյեմբերին գրանցվել է 1.3% աճ:

Չնայած արդյունաբերական ոլորտում գրանցված նման դրական տեղաշարժերին՝ հրապարակված մյուս ցուցանիշները բացասական բնույթ են կրում: Մասնավորապես, նոյեմբերին շինարարության ոլորտում գրանցված աճը կանխատեսվող 2%-ի փոխարեն կազմել է 1.5%: Նույն ամսում Մեծ Բրիտանիայի




առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն աճելով հասել է -12.16 մլրդ ֆունտի, իսկ հոկտեմբեր ամսվա -9.71 մլրդ տվյալը վերանայվել է՝ կազմելով -9.89 մլրդ ֆունտ: ԵՄ կազմից դուրս երկրների հետ արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական սալդոն ևս աճել է՝ հասնելով -3.58 մլրդ ֆունտի, իսկ նախորդ ամսվա -1.6 մլրդ ֆունտ տվյալը վերանայվել է՝ փոխարինվելով -2.12 մլրդ ֆունտ արժեքով: Արդեն 2016թ. տարվա վերջին ամսվա ընթացքում բացասական արդյունքներ են հրապարակվել Մեծ Բրիտանիայի մանրածախ առևտրի վերաբերյալ: Դեկտեմբերին նոյեմբեր ամսվա համեմատ մանրածախ առևտրի ծավալները գրանցել են 1.9% անկում, իսկ նախորդ տարվա համեմատ գրանցվել է ընդամենը 4.3% աճ, ինչը զիջում է նախորդ ամսվա աճի ցուցանիշը:

Չինաստան

2015թ. 6.9% աճից հետո 2016թ. Չինաստանի տնտեսական աճը կազմել է 6.7%: Տարվա 4-րդ եռամսյակում Չինաստանի ՀՆԱ աճը կազմել է 6.8%՝ ի տարբերություն երրորդ եռամսյակում գրանցված 6.7% աճի:

2017թ. հունվարին Չինաստանի արտահանման ծավալները գրանցել են 7.9% տարեկան աճ՝ չնայած, որ նախորդ ամսվա 6.2% անկումից հետո կանխատեսվում էր ընդամենը 3.3% աճ: Ներմուծման ծավալները երկրում նույնպես տարեկան կտրվածքով հունվարին զգալիորեն աճել են՝ +16.7%: Նման աճ չէր գրանցվել 2013թ. մայիսից: Արդյունքում, Չինաստանի արտաքին առևտրի հաշվեկշռի դրական սալդոն դոլարային արտահայտությամբ աճել է՝ նախկին 40.71 մլրդ դոլարից հասնելով 51.35 մլրդ դոլարի:




2017թ. տարվա առաջին ամսվա ընթացքում որոշակի պասիվացում է գրանցվել Չինաստանի արդյունաբերության ոլորտում. արդյունաբերության ոլորտի



PMI-ն (Purchasing Managers Index) նվազել է՝ նախկին 51.4-ից դառնալով 51.3: Նշենք, որ 2016թ. դեկտեմբերին գրանցվել էր արդյունաբերական արտադրանքի ծավալների աճի տեմպերի դանդաղում. տարեկան կտրվածքով նոյեմբերյան 6.2% աճից հետո

Գրաֆիկ. Չինաստան / Մանրածախ առևտրի ծավալների ԿՕՎ
փոփոխության տվյալներ



գրանցվել էր 6% աճ: Չնայած, որ

արդյունաբերության աճի տեմպերը դանդաղել են՝ նույն ժամանակահատվածում երկրում մանրածախ առևտրի ծավալների աճի տեմպերն արագացել են՝ կազմելով 10.9% նախկին 10.8%-ի և կանխատեսվող 10.7%-ի


փոխարեն:

2016թ. սեպտեմբերին գրանցված ընդամենը 1.3% գնաճից հետո արդեն հաջորդ ամիսներին որոշ չափով արագացել են ինֆլյացիայի տեմպերը: Դեկտեմբերյան տվյալներով սպառողական գների ինդեքսի տարեկան աճը կազմել է 2.5%, ինչը 2014թ. հունիսից հետո գրանցված առավելագույն արժեքն է: ՄԳԻ-ն կանխատեսվածից և նախորդ տվյալից ավելի մեծ չափերով է աճել նաև ամսական կտրվածքով՝ +1%:

Արդյունաբերական գների ինդեքսի տարեկան աճը նույն

ժամանակահատվածում կազմել է 6.9% նախկին 5.5%-ի փոխարեն:

Գրաֆիկ. Չինաստան/ արտաքին առևտուր/2016թ (ամսական)





Ճապոնիա

2016թ. ամբողջ տարվա ընթացքում տարեկան կտրվածքով անընդհատ կրճատվելուց հետո արդեն դեկտեմբերին գրանցվել է 2015թ. դեկտեմբերի համեմատ Ճապոնիայի

արտահանման

ծավալների՝ 5.4% աճ:

Նշենք, որ կրճատումները սկսվել էին դեռևս 2015թ. հոկտեմբերից:

Գրանցված աճը, փաստորեն, 2015թ. հուլիսից հետո լավագույն

ցուցանիշն է: Միննույն ժամանակ գրանցվել է ներմուծման

ծավալների կրճատման տեմպերի դանդաղում:

Արդեն դեկտեմբեր ամսվա

ընթացքում 2015թ. դեկտեմբերի համեմատ Ճապոնիայում ներմուծման

ծավալները նվազել են ընդամենը 2.26%-ով (դեռևս 2015թ. սեպտեմբերից մինչ 2016թ. հոկտեմբեր ամիսը գրանցվում էին երկնիշ

թվերով կրճատումներ՝ հոկտեմբերին, օրինակ՝

գրանցվել էր 16.5% տարեկան



(YoY) կրճատում): Նշենք, որ Ճապոնիայում ներմուծման

ծավալների կրճատումներ են գրանցվում արդեն 24

ամիս անընդմեջ, իսկ առավելագույն տարեկան

կրճատումը 2015-2016թթ. ընթացքում գրանցվել է

2016թ. հուլիսին (-24.7%):





Առևտրային հաշվեկշռի դրական սալդոն նախորդ ամսվա 153 մլրդ իենից աճել է մինչև 641 մլրդ իեն՝ չնայած, որ կանխատեսվում էր աճ՝ ընդամենը մինչև 270 մլրդ իեն:

Հունվարի 31-ին տեղի ունեցավ Ճապոնիայի Բանկի նիստը, որտեղ, ինչպես և կանխատեսվում էր, որոշվեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը պահպանել անփոփոխ՝ -0.10% մակարդակում: Միևնույն ժամանակ որոշվել է 0-յական մակարդակին մոտ պահպանել 10-ամյա պետական պարտատոմսերի եկամտաբերության նպատակային արժեքը, իսկ քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների տարեկան գնումների ծավալները՝ մոտ 80 տրլն իեն մակարդակում: Փաստորեն, պետական պարտատոմսերի եկամտաբերության վերահսկմամբ իրականացվող քանակական և որակական մեղմացման քաղաքականությունը դեռևս կպահպանվի քանի դեռ տնտեսությունն աստիճանաբար չի մոտեցել գնաճի նպատակային 2% մակարդակին:

Ճապոնիայի Բանկը վերանայել է նախկին տնտեսական կանխատեսումները. այժմ արդեն 2016/17 թթ. համար կանխատեսվում է 0.2% գնանկում՝ նախկին 0.1% գնանկման փոխարեն: 2016/17թթ. համար կանխատեսվում է 1.5% ՀՆԱ աճ նախկին 1.3% կանխատեսման փոխարեն, իսկ 2018/19թթ. համար՝ +1.1% նախկին 0.9% կանխատեսման փոխարեն: Վերջին տվյալներով 2016թ. դեկտեմբերին տարեկան գնաճը երկրում կազմել է 0.3%, իսկ 2016թ. երրորդ եռամսյակում ՀՆԱ աճը՝ 0.3%: Արդյունաբերական արտադրանքի ծավալների ամսական աճը 2016թ. դեկտեմբերին կազմել է 0.5%, ինչը չնայած, որ զգալիորեն զիջում է նոյեմբերին գրանցված ամսական աճի ցուցանիշին, այնուամենայնիվ գերազանցում է կանխատեսումները: Արդեն 2017թ. հունվարին նախնական տվյալների համաձայն Ճապոնիայի արդյունաբերության ոլորտում գրանցվել է ակտիվության փոքր-ինչ նվազում (Purchasing Managers' Index-ը (PMI) կազմել է 52.7՝ նախկին 52.8-ի փոխարեն): Գործազրկության մակարդակը դեկտեմբերին պահպանվել է նախկին 3.1% մակարդակում:



Ապրանքային շուկա

Նավթ: 2014թ հունիսի կեսերից մինչև 2016թ հունվարը ներառյալ Brent տեսակի նավթի գինը նվազել է չորս անգամ՝ բարելի դիմաց 114.9 ԱՄՆ դոլարից հասնելով 27.1 ԱՄՆ դոլարի: Պատճառները տարբեր էին՝ նավթի արդյունահանման համաշխարհային ծավալների կտրուկ աճից մինչև Չինաստանի տնտեսական աճի տեմպերի դանդաղումը: Կարևորագույն խնդիրը կայանում էր նրանում, որ առանցքային արդյունահանողները քայլեր չէին ձեռնարկում շուկայում անհավասարակշռության առաջացումը կանխելու ուղղությամբ՝ առավելապես մտահոգված լինելով շուկայի սեփական բաժինը պահպանելու խնդրով: Արդյունքում, 2015թ նավթի արդյունահանման ծավալներն անընդմեջ աճում էին՝ համաշխարհային մասշտաբով օրական ծավալներն ավելանալով 2.2մլն բարելով, մինչդեռ պահանջարկն աճել է ընդամենը 1.4մլն բարելով:

Միայն 2016թ սկզբին, երբ նավթի բարելի գինն ընկավ 30 ԱՄՆ դոլարից ցածր մակարդակի, արդյունահանողների կողմից սկսեցին մտահոգություններ հնչեցվել: Առաջինն արձագանքեց ՕՊԵԿ-ի՝ տնտեսապես առավել ծանր վիճակում գտնվող անդամ Վենեսուելան՝ առաջարկելով կրճատել նավթի արդյունահանման ծավալներն առնվազն 5%-ով: Առաջարկը, սակայն, աջակցություն չստացավ:

Շուկան կարգավորելու հաջորդ փորձը տեղի ունեցավ 2016թ փետրվարի 16-ին, երբ ՕՊԵԿ-ի երեք անդամները՝ Սաուդյան Արաբիան, Քաթարը, Վենեսուելան և Ռուսաստանը Քաթարում համաձայնության եկան նավթի արդյունահանման

ծավալները ֆիքսել հունվարյան մակարդակներում, միայն այն պարագայում, սակայն, եթե մյուս արդյունահանողները նույնպես միանան համաձայնությանը: Այս ֆոնին նավթի գների աճ գրանցվեց՝ Brent տեսակի նավթի բարելի գինն անցնելով 40 ԱՄՆ դոլարի սահմանը: Այդ ժամանակից ի վեր ՕՊԵԿ-ի գրեթե բոլոր անդամ երկրները տվեցին նախաձեռնությանն իրենց համաձայնությունը, բացառությամբ Իրանի, որի

Գրաֆիկ. Brent նավթի գնի դինամիկա, ԱՄՆ դոլար. 2014-2016թթ





նկատմամբ միջազգային պատժամիջոցները հանելուց հետո 2016թ հունվարից նոր էր վերականգնել իր մուտքը նավթի շուկա:

2016թ ամռան և աշնան ամիսներին բանակցությունների նոր փուլերից հետո նոյեմբերի 30-ին ՕՊԵԿ-ի անդամ երկրները համաձայնություն կնքեցին 2017թ հունվարի 1-ից նավթի արդյունահանման օրական ծավալները 1.2մլն բարելով կրճատելու վերաբերյալ՝ մինչև 32.5մլն բարել օրական ծավալը: Համաձայնությանը միացան նաև ՕՊԵԿ-ի անդամ չհանդիսացող 11 նավթարդյունահանող երկիր, որոնց կողմից արդյունահանման ծավալները պետք է կրճատվեն 0.6մլն բարելով՝ կրճատման ընդհանուր ծավալն 2017թ առաջին կեսին հասնելով 1.8մլն բարելի:

ՕՊԵԿ-ի վերջին հաշվետվության համաձայն՝ նավթի շուկայում առկա ավելցուկը սկսել է կրճատվել: ՕՊԵԿ-ի կողմից 2016թ դեկտեմբերին օրական շուկա է մուտք արվել 33.085մլն բարել նավթ՝ նոյեմբերյան ցուցանիշից նվազելով 221հզ բարելով: Ընդ որում, առավելագույն կրճատումն ապահովել է Սաուդյան Արաբիան: Վերջինիս արտադրության ծավալները նվազել են օրական 10մլն բարելից, մինչդեռ, ըստ համաձայնության, կրճատումը պետք է կատարվեր օրական 486հզ բարելի սահմաններում՝ մինչև 10.058մլն բարել ծավալը: Եվ, չնայած արդեն իսկ արդյունահանման ծավալների՝ համաձայնեցվածից առավել կրճատմանը, Սաուդյան Արաբիան դիտարկելու է նաև հաջորդ վեց ամիսներին կրճատումը շարունակելու հարցը:

ՕՊԵԿ-ի անդամ չհանդիսացող երկրների շարքում առավելագույն կրճատումն իրականացրել է ՌԴ-ը՝ ապահովելով նախատեսված ծավալի (300հզ բարել) կեսը՝ 150հզ բարելը: Նշենք, որ մինչ 2016թ ավարտը ՌԴ-ն արդյունահանել է շուրջ 547.5մլն տոննա նավթ ու գազի կոնդենսատ, ինչն 2.5%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշն ու հանդիսանում ԽՍՀՄ անկումից հետո գրանցված առավելագույն ծավալը:

Քուվեյթը կրճատել է նավթի արդյունահանման իր ծավալները 133հզ բարելով, Անգոլան ամբողջությամբ կատարել է պայմանավորվածությունն, իսկ Օմանը՝ 45հզ բարելով գերակատարել նախատեսված ցուցանիշը: Միացյալ Արաբական Էմիրություններն ու Քաթարը պայմանավորվածությունը կատարել են 60%-ով: Իրաքի կողմից կրճատումը նախատեսվում է հասցնել 210հզ բարելի՝ մինչև 4.3մլն բարել օրական ծավալը:

Իրանն, իր հերթին, պատրաստվում է առաջիկա երկու ամիսների ընթացքում ավելացնել նավթի արդյունահանման ծավալները: Նախատեսվում է գործարկել մի շարք նոր նախագծեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի նավթի օրական արդյունահանման ներկայիս 3.8մլն բարել ծավալները մինչ մարտի 20-ը հասցնել 4մլն բարելի (ավելի քան 5%-ով գերազանցում է դեկտեմբերին Վիեննայում կայացած



հանդիպման ժամանակ սահմանված քվոտան): Նախատեսվում է նաև ավելացնել նավթի արտահանման ծավալները:

Միևնույն ժամանակ, հարկ է հաշվի առնել, որ նավթի շուկայում առաջարկի կրճատման արդյունքում նավթի աճող գները խթանում են ամերիկյան նավթի արտադրությունը, որը նաև 2014թ-ից նավթի գների անկման պատճառներից էր: 50 ԱՄՆ դոլարից բարձր գները բարենպաստ պայմաններ են ապահովում ամերիկյան թերթաքարային նավթի արդյունահանման գործընթացը կազմակերպելու համար: Այսինքն, մի կողմից, ՕՊԵԿ-ի և մյուս նավթարդյունահանողների կողմից արտադրության ծավալների կրճատումը բերում է շուկայում նավթի գների այդքան ցանկալի աճին, իսկ մյուս կողմից, ամերիկյան նավթարդյունահանողներն օգտվում են գների աճից և մեծացնում արտադրության ծավալները: Արդյունքում, ԱՄՆ-ում նավթի արդյունահանման օրական ծավալներն 2017թ հունվարին հասել են 8.9մլն բարելի, թեև դեռ նախորդ տարվա կեսերին չէին հասնում 8.5մլն բարելի: Իսկ ակտիվ նավթահորերի թիվը, վերջին 14 շաբաթների ընթացքում գրեթե անընդմեջ աճ գրանցելուց հետո, փետրվարի սկզբին հասել է 583-ի, որն 2015թ նոյեմբերից հետո գրանցված առավելագույն թվաքանակն է: Վերջինս մեծացնում է այն ռիսկը, որ ՕՊԵԿ-ի համաձայնության

Ֆոնին շուկայում դիտվող գների աճը կչեզոքացվի ամերիկյան նավթի առաջարկի աճի հաշվին:

Արդյունքում, ՕՊԵԿ-ի համաձայնության ֆոնին 2017թ հունվարին բարելի դիմաց 58 ԱՄՆ դոլարի սահմանը հատելուց հետո Brent տեսակի նավթի գինը, ամերիկյան նավթի արդյունահանման ծավալների աճի հետևանքով առաջացած անհանգստության ֆոնին նվազեց շուրջ 4.3%-ով՝ հասնելով միջինը 55 դոլար բարելի դիմաց գնին, իսկ փետրվարի առաջին օրերին, շարունակելով անկումը, հասավ 54.6 դոլար արժեքին:

Գրաֆիկ. Brent տեսակի նավթի գնի դինամիկա. 2016թ դկ. - 2017թ հվ.



Ուսկի: 2017թ հունվարի սկզբին ԱՄՆ-ում նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության անորոշության, իսկ այնուհետև նորանշանակ նախագահի դրսևորած պրոտեկցիոնիստական դիրքորոշման հետևանքների անորոշության



պայմաններում ամսվա ընթացքում և փետրվարի առաջին օրերին ԱՄՆ դոլարի դիրքերն այլ հիմնական արժույթների նկատմամբ նվազող դինամիկա են գրանցել՝ խթանելով դոլարով գնանշվող ոսկու նկատմամբ պահանջարկը: Արդյունքում դեկտեմբերի վերջին օրերից մինչև հունվարի 24-ը ոսկու ունցիայի գինն աճեց շուրջ 7.5%-ով՝ հասնելով 1,217.9 դոլար առավելագույն արժեքին:

Հունվարի 24-26-ն ընկած ժամանակահատվածում կորպորատիվ եկամուտների հնարավոր աճի վերաբերյալ ձևավորված սպասումների ֆոնին ներդրողների շրջանում աճեց բաժնետոմսերի նկատմամբ պահանջարկը՝ խթանելով ֆոնդային շուկայի աճը: Վերջինս պայմանավորված էր ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կողմից տեղական արտադրող ընկերությունների նկատմամբ կարգավորող դաշտի մեղմացման և երկու նոր նավթամուղների կառուցման վերաբերյալ կարգադրությունների ստորագրմամբ: Ներդրողների տրամադրվածությունները բարելավվեցին նաև 2016թ.

չորրորդ քառորդում կորպորատիվ եկամուտների սպասվածից բարձր ցուցանիշների ֆոնին: S&P500-ի՝ իրենց ցուցանիշները հաղորդած ընկերությունների 70%-ի տվյալները գերազանցել էին սպասումները: Thomson Reuters-ի նախնական գնահատմամբ նշված քառորդում կորպորատիվ եկամուտների աճի ցուցանիշը կկազմի շուրջ 6.8%՝ գրանցելով վերջին երկու տարիների

Գրաֆիկ. Ոսկու գնի դինամիկա. 2017թ հունվար



առավելագույն աճը: Ռիսկի ախորժակի աճի պայմաններում նշված օրերին ոսկու գները նվազեցին 2.8%-ով՝ մինչև 1,183.2 դոլար ունցիայի դիմաց արժեքը:

ԱՄՆ-ում նախագահական նոր ադմինիստրացիայի վարած քաղաքականության ու դրա հնարավոր հետևանքների վերաբերյալ մտահոգությունները, սակայն, նոր թափ ստացան Դ.Թրամփի կողմից Ասիախաղաղօվկիանոսյան համագործակցությունից ԱՄՆ դուրս գալու, մահմեդական յոթ երկրների քաղաքացիների մուտքն ԱՄՆ արգելելու վերաբերյալ կարգադրությունների ստորագրման, Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրին ԱՄՆ մասնակցության վերանայման և Մեքսիկայի հետ սահմանագծին պատի կառուցման վերաբերյալ որոշումների կայացման ֆոնին: ԱՄՆ



արտաքին առևտրի և երկրի տնտեսության վրա նշված որոշումների հնարավոր ազդեցության ոչ միանշանակ գնահատականների և ներդրողների շրջանում մտահոգությունների աճի ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերն այլ հիմնական արժույթների նկատմամբ նոր թափով սկսեցին նվազել: Քաղաքական ու տնտեսական անորոշությունների և ԱՄՆ դոլարի նվազող փոխարժեքի պայմաններում ոսկու՝ որպես ապահով և առավել հասանելի դարձած ակտիվի նկատմամբ պահանջարկի աճ գրանցվեց՝ հանգեցնելով վերջինիս գների շուրջ 4.4% աճին մինչև վերջին 2.5 ամիսների առավելագույն մակարդակները՝ 1,235 դոլար ունցիայի դիմաց: ԱՄՆ դոլարի դիրքերի նվազմանը նպաստեց նաև 2016թ չորրորդ քառորդի ՀՆԱ-ի ակնկալվածից ցածր ցուցանիշը՝ հանգեցնելով ԴՊՀ կողմից ԴՎՔ բազային տոկոսադրույթի՝ 2017թ համար նախատեսված երեք անգամ բարձրացման վերաբերյալ ներդրողների շրջանում առկա ակնկալիքների զսպմանը: Իսկ ոսկու գները հակադարձ կապի մեջ են գտնվում տոկոսադրույթների հետ, քանի որ բարձր տոկոսադրույթները մեծացնում են տոկոսային եկամուտ չապահովող ոսկում ներդրումների այլընտրանքային ծախսը:

Ընդհանուր առմամբ 2017թ հունվարին ոսկու ունցիայի գինն աճել է շուրջ 9%-ով: ԱՄՆ նոր նախագահի որդեգրած պրոտեկցիոնիստական տնտեսական կուրսը, ինչպես նաև աշխարհի այլ երկրներում ազգայնականության միտումների աճը կարող են հարվածել միջազգային առևտրին՝ անկայունացնելով այն երկրների տնտեսական դրությունը, որոնք հիմնվում են արտաքին առևտրի վրա: Պատմականորեն, նման իրավիճակները դրական են անդրադառնում ոսկու գների վրա:

Բացի այդ, չի բացառվում, որ ԱՄՆ-ում դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույթի հնարավոր բարձրացումներն ուղեկցվեն նաև ինֆլյացիայի աճով, որի հիմքում կլինի նավթի գների աճը: Եվ եթե ինֆլյացիայի աճը գերազանցի ԴՊՀ կողմից տոկոսադրույթների աստիճանական բարձրացմանը, ոսկին կարող է դրականորեն արձագանքել: Սակայն, տոկոսադրույթների բարձրացման հետևանքով գնաճի զսպման պարագայում չի խթանվի նաև ոսկու գների աճը: Ներկայիս ԱՄՆ-ում թե տնտեսական, և թե քաղաքական անորոշության պայմաններում որոշակիորեն նվազել են ԴՎՔ տոկոսադրույթի բարձրացման սպասումները, իսկ ռիսկի ախորժակի զսպվածությունը ներդրողների շրջանում մեծացնում է ոսկու նկատմամբ պահանջարկը:



Պղնձի շուկա: Վերջին ամիսներին պղնձի շուկայում ընդհանուր առմամբ պահպանվում է գնաճային միջավայր: Նախորդ տարիների համեմատ շուկայում տրամադրվածությունների բարելավումը մեծապես պայմանավորված է Չինաստանի տնտեսության ակտիվացմամբ, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ենթակառուցվածքների ոլորտում ներդրումներ կատարելու իր ծրագրերի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի հայտարարություններով: Պղնձի գների աճը խթան ստացավ Չինաստանում 2016թ 6.0%-ից ավել տնտեսական աճի սպասումների ֆոնին: Քանի որ Չինաստանը հանդիսանում է պղնձի՝ աշխարհի խոշորագույն սպառողը՝ պղնձի շուկան բավականին զգայուն է Չինաստանում տնտեսական զարգացումների նկատմամբ: Բացի ՀՆԱ-ի ակնկալվող բարձր ցուցանիշից պղնձի գների վրա դրական անդրադարձավ Չինաստանում արտադրողների գների աճի վերաբերյալ ցուցանիշների հրապարակումը, ինչը խոսում է արտադրողականության աճի, հետևաբար՝ պղնձի շուկայի համար դրական հեռանկարների մասին: 2016թ սեպտեմբերից աճողական ցուցանիշներ գրանցելով՝ արտադրողների գների ինդեքսի աճը կազմեց 5.5% (YoY): Նման բարձր ցուցանիշ վերջին անգամ գրանցվել էր 2011թ վերջին:

Արդյունքում, միայն 2017թ հունվարին պղնձի 1 ֆունտի գինն աճել է շուրջ 8.5%-ով՝ հասնելով 2.72 ԱՄՆ դոլարի:


Գրաֆիկ. Պղնձի գնի դինամիկա. 2017թ հունվար, ԱՄՆ դոլար/ֆունտ





Արժույթային շուկա

USD: 2017թ. հունվար ամսվա ընթացքում գրանցվեց ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացում: Արդեն իսկ ամսվա առաջին շաբաթվա ընթացքում դոլարը թուլացրեց դիրքերը գրեթե բոլոր հիմնական արժույթների նկատմամբ: ԱՄՆ դոլարի ինդեքսը, որն արտացոլում



է վերջինիս դիրքերը 6 հիմնական արժույթներից կազմված զամբյուղի նկատմամբ, հունվարի 3-ին օրվա սկզբից մոտ 0.8% աճ գրանցելուց հետո սկսեց նվազել: Նվազման տենդենցը շարունակվեց մինչև ամսվա վերջ: ԱՄՆ դոլարի դիրքերի վրա հունվարի առաջին շաբաթվա ընթացքում բացասաբար անդրադարձավ հատկապես ԱՄՆ ՖՊՀ նիստի

արձանագրության հրապարակումը: Վերջինս ցույց տվեց, որ դեռևս առկա են մի շարք ռիսկեր, որոնք հնարավոր է՝ ազդեցություն ունենան տարվա ընթացքում տոկոսադրույքի բարձրացումների հաճախականության վրա:

2017թ. հունվար ամսվա առաջին շաբաթվա ընթացքում ԱՄՆ դոլարի դիրքերի վրա բացասաբար անդրադարձավ նաև աշխատանքի շուկայի՝ սպասվածից վատ տվյալների հրապարակումը. ADP տվյալներով ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվը դեկտեմբերին աճել էր ընդամենը 153 հազարով այն դեպքում, երբ նախորդ ամիս գրանցվել էր 215 հազար և կանխատեսվում էր 170 հազարով աճ: Աշխատանքի վիճակագրության բյուրոյի կողմից հրապարակված տվյալը ցույց տվեց, որ դեկտեմբերին ոչ գյուղատնտեսական ոլորտի զբաղվածների թիվն աճել էր 156 հազարով (նախկին 204 հազարի և կանխատեսվող 178 հազարի փոխարեն):

Հաջորդ օրերին ԱՄՆ դոլարի ինդեքսի նվազման տենդենցի պահպանումն արդեն պայմանավորված էր ԱՄՆ նորընտիր նախագահ Դ. Թրամփի հետագա քաղաքականության հետ կապված անորոշություններով:

EUR/USD: EUR/USD զույգը մի կողմից դոլարի թուլացման և մյուս կողմից ԵՄ տնտեսական ցուցանիշների՝ սպասվածից լավ արդյունքների գրանցման ֆոնին 2017թ. հունվարին գրանցեց մոտ 3% աճ: Հունվարի 19-ին տեղի ունեցավ ԵԿԲ հերթական նիստը, որտեղ որոշվեց դրամավարկային քաղաքականության



տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 0.0% մակարդակում, իսկ ավանդադրման տոկոսադրույքը՝ -0.4% մակարդակում: ԵԿԲ նման որոշումը սպասելի էր, քանի որ վերջին ամիսներին ԵՄ տնտեսության առանձին հատվածներում գրանցվել են առավելապես դրական տեղաշարժեր: 2016թ. նոյեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալները ԵՄ-ում գրանցել են տարեկան (YoY) 3.2% և ամսական (MoM) 1.5% աճ՝ երկու դեպքում էլ գերազանցելով սպասումները: ԵՄ տնտեսական տրամադրվածությունների ինդեքսն աճել է՝ նախկին 15.8 արժեքի փոխարեն կազմելով 18.1, ինչը վկայում է առաջիկա 6 ամիսների ընթացքում տնտեսական իրավիճակի հետ կապված օպտիմիստական սպասումների աճի մասին: 2016թ. երրորդ եռամսյակում ԵՄ ՀՆԱ աճը նախորդ տարվա 3-րդ եռամսյակի համեմատ կազմել է 1.8%, ինչը գերազանցում է նախորդ եռամսյակի և կանխատեսվող 1.7% աճի ցուցանիշը: Եռամսյակային կտրվածքով երրորդ եռամսյակում ՀՆԱ աճը կազմել է 0.5%:

Հիշեցնենք, որ ԵԿԲ կողմից քանակական մեղմացման ծրագիրը (QE)գործարկվեց 2015թ. մարտից: Վերջինիս շրջանակներում իրականացվում էին

ամսական 60 մլրդ եվրոյի ակտիվների գնումներ: Այնուհետև ամսական գնումների ծավալներն ավելացվեցին մինչև 80 մլրդ եվրո և 2016թ. ապրիլին հայտարարվեց, որ ծրագիրը կշարունակվի մինչև 2017թ. մարտը: Չնայած, որ քանակական մեղմացման ծրագրի մեկնարկից հետո դեֆլյացիոն ռիսկերն աստիճանաբար



հաղթահարվում են, իսկ վերջին ժամանակներս արդեն նույնիսկ որոշ չափով նկատվում են գնաճային միտումներ, այնուամենայնիվ, դեռևս ինֆլյացիայի մակարդակը զիջում է նպատակային 2%-ը (տարեկան կտրվածքով սպառողական գների ինդեքսի աճը հունվարին նախնական տվյալներով կազմել է 1.8%):

ԵԿԲ նախորդ նիստը կայացել էր դեկտեմբերի 8-ին, որտեղ որոշվել էր դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ վերֆինանսավորման տոկոսադրույքը պահպանվեց 0.0%,



ավանդադրման տոկոսադրույքը՝ -0.4%: Նույն մակարդակում պահպանվեցին նաև քանակական մեղմացման շրջանակներում ակտիվների ամսական գնումների ծավալները՝ 80 մլրդ եվրո, սակայն ԵԿԲ Կառավարման Խորհուրդը որոշեց QE-ի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017թ. դեկտեմբեր, իսկ հետագայում անհաժեշտության դեպքում՝ ավելի երկար ժամկետով: Որոշվել էր նաև QE-ի իրականացման ամսական ծավալներն արդեն 2017թ. ապրիլից նվազեցնել մինչև 60 մլրդ եվրո:

ԵԿԲ կողմից հունվարյան նիստում ԴՎՔ տոկոսադրույքներն ու քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումների ծավալներն անփոփոխ թողնելու որոշումից հետո ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում հատկապես ԵՄ մի շարք դրական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակման պայմաններում աճեցին եվրոյի նկատմամբ ցլային տրամադրվածությունները:

GBP/USD: 2017թ. հունվարին՝ ամսվա առաջին կեսին, չնայած ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմանը՝ նվազման դինամիկա էր դրսևորում GBP/USD փոխարժեքը: Բրիտանական արժույթի անկումը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ կազմից դուրս գալու հետ կապված մտավախությունների նոր ալիքի ձևավորմամբ: «Կոշտ Brexit»-ի հեռանկարներն ավելացրեցին բրիտանական ֆունտի նկատմամբ արջային տրամադրվածությունները՝ հանգեցնելով վերջինիս դիրքերի թուլացմանը:

Հունվարի 17-ից արդեն Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ. Մեյի ելույթից հետո GBP/USD փոխարժեքի նվազման դինամիկան փոխարինվեց աճով՝ ինչը շարունակվեց մինչև ամսվա վերջ: Բացի այդ, հունվարի 18-ին Մեծ Բրիտանիայի Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվեցին երկրի աշխատանքի շուկայի՝ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված տնտեսական ցուցանիշներ, որոնք ընդհանուր առմամբ դրական բնույթ էին կրում: Մասնավորապես, միջին եկամուտներն առանց բոնուսների նոյեմբերին գրանցել են 2.7% աճ՝ չնայած, որ նախորդ ամիս աճը կազմել էր 2.6% և աճի տեմպերի որևէ փոփոխություն չէր կանխատեսվում: Միջին եկամուտները՝ բոնուսների հետ






միասին, աճել են 2.8%-ով կանխատեսվող և նախորդ 2.6%-ի փոխարեն: Չնայած, որ նոյեմբերի տվյալներով Մեծ Բրիտանիայում գործազրկության մակարդակը չէր փոփոխվել՝ կազմելով 4.8%, այնուամենայնիվ արդեն դեկտեմբերյան տվյալներով հայտնի էր, որ տեղի էր ունեցել գործազուրկների թվի 10.1 հազարով կրճատում:

USD/JPY: Հունվարի 31-ին տեղի ունեցավ Ճապոնիայի Բանկի նիստը, որտեղ, ինչպես և կանխատեսվում էր, որոշվեց դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը պահպանել անփոփոխ՝ -0.10% մակարդակում: Միևնույն ժամանակ որոշվել է 0-յական մակարդակին մոտ պահպանել 10-ամյա պետական պարտատոմսերի եկամտաբերության նպատակային արժեքը, իսկ քանակական

մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների տարեկան գնումների ծավալները՝ մոտ 80 տրլն իեն մակարդակում: Փաստորեն, պետական պարտատոմսերի եկամտաբերության վերահսկմամբ իրականացվող քանակական և որակական մեղմացման

քաղաքականությունը դեռևս կպահպանվի քանի դեռ տնտեսությունն աստիճանաբար չի մոտեցել գնաճի նպատակային 2% մակարդակին:


Ճապոնիայի Բանկը վերանայել է նախկին տնտեսական կանխատեսումները. այժմ արդեն 2016/17 թթ. համար կանխատեսվում է 0.2% գնանկում՝ նախկին 0.1% գնանկման փոխարեն: 2016/17թթ. համար կանխատեսվում է 1.5% ՀՆԱ աճ նախկին 1.3% կանխատեսման փոխարեն, իսկ 2018/19թթ. համար՝ +1.1% նախկին 0.9% կանխատեսման փոխարեն: USD/JPY փոխարժեքն 2017թ. հունվար ամսվա ընթացքում գրանցեց մոտ 4.5% անկում:



USD/RUB: Հունվար ամսվա առաջին շաբաթվա ընթացքում կտրուկ անկում գրանցելուց հետո մինչ ամսվա վերջ կողային տրենդում էր գտնվում USD/RUB փոխարժեքը: 59,1-60,29 միջակայքում տատանվելուց հետո հունվարի 26-ին փոխարժեքն առաջին անգամ հատեց վերին սահմանը՝ հասնելով մինչև 60.552 արժեքի: Փոխարժեքի նման աճն առավելապես պայմանավորված էր ՌԴ Ֆինանսների նախարարության կողմից փետրվարին արժույթային ինտերվենցիա իրականացնելու սպասումներով: Արտահանող կազմակերպությունների կողմից,



որպես կանոն, ամսվա վերջին օրերին՝ հարկերի վճարման ժամանակաշրջանի ընթացքում, աճում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկը՝ հանգեցնելով ռուբլու դիրքերի ամրապնդման, սակայն նույնիսկ նման պայմաններում հնարավոր ինտերվենցիաների սպասումներն ավելի մեծ ազդեցություն ունեցան ռուբլու փոխարժեքի վրա՝ հանգեցնելով վերջինիս արժեզրկմանը:



Ֆոնդային շուկա

ԱՄՆ: 2017թ հունվարի առաջին կեսին ամերիկյան ֆոնդային ինդեքսների կայուն դինամիկան արտացոլում էր ներդրողների շրջանում ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի՝ հունվարի 20-ին կայանալիք երդմնակալության արարողությունից առաջ ձևավորված զգուշավորությունը: Մինչդեռ վերջինիս շրջանակներում ԱՄՆ նախագահի ելույթի ֆոնին հունվարի 23-ից ֆոնդային շուկայում ակտիվություն գրանցվեց՝ դրսևորվելով ֆոնդային ինդեքսների աճով: Նախագահ Դ.Թրամփը հանդես եկավ ինչպես ԱՄՆ շարքային քաղաքացիների, այնպես էլ բիզնեսի հարկային բեռը նվազեցնելու, 25 մլն նոր աշխատատեղ ստեղծելու, տնտեսության կարգավորիչ դաշտը մեղմացնելու ծրագրերով: Բացի այդ, նախագահի խոսքերով, արտաքին առևտրի, հարկերի, իմիգրացիայի, արտաքին կապերի հետ կապված ցանկացած որոշում այսուհետ կայացվելու է առաջին հերթին հաշվի առնելով ԱՄՆ շարքային քաղաքացու շահերը: Միևնույն ժամանակ, սակայն, Դ.Թրամփի ելույթն առավելապես նվիրված էր վարվելիք պրոտեկցիոնիստական քաղաքականությանը, և մանրամասներ չէր պարունակում ԱՄՆ տնտեսության զարգացման, այդ թվում՝ հարկերի կրճատման և ենթակառուցվածքային ծրագրերի մասին: S&P500 ինդեքսում ընդգրկված 11 հիմնական ճյուղերից 9-ի ընկերությունների թղթերը, սակայն, աճ գրանցեցին:

Հունվարի 23-ին ամերիկյան խոշորագույն ընկերությունների հետ Սպիտակ տանն անցկացված իր առաջին հանդիպման ժամանակ Դ.Թրամփը վերջիններիս




հայտնեց երկրի սահմաններից դուրս իրենց արտադրությունը տեղափոխող, այնուհետև արտադրանքն ԱՄՆ ներկրող ընկերությունների նկատմամբ «շատ բարձր» մաքսատուրքեր սահմանելու իր մտադրության մասին: Միևնույն ժամանակ, նախագահը խոստացավ մեղմացնել այն ընկերությունների նկատմամբ գործող կարգավորումների դաշտը, որոնք արտադրական հզորությունները կտեղակայեն ԱՄՆ-ում:

Հունվարի 24-26-ն ընկած ժամանակահատվածում կորպորատիվ եկամուտների հնարավոր աճի վերաբերյալ ձևավորված սպասումների ֆոնին ներդրողների շրջանում բաժնետոմսերի նկատմամբ պահանջարկն աճեց՝ խթանելով ֆոնդային շուկայի աճը: Վերջինս պայմանավորված էր ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կողմից տեղական արտադրող ընկերությունների նկատմամբ կարգավորող դաշտի մեղմացման և երկու նոր նավթամուղների կառուցման վերաբերյալ կարգադրությունների ստորագրմամբ: Ներդրողների տրամադրվածությունները բարելավվեցին նաև 2016թ չորրորդ քառորդում կորպորատիվ եկամուտների սպասվածից բարձր ցուցանիշների ֆոնին: S&P500-ի՝ իրենց ֆինանսական արդյունքները հաղորդած ընկերությունների մեծամասնության տվյալները գերազանցել էին սպասումները: Thomson Reuters-ի նախնական գնահատմամբ նշված քառորդում կորպորատիվ եկամուտների աճի ցուցանիշը կկազմի շուրջ 6.8%՝ գրանցելով վերջին երկու տարիների առավելագույն աճը: Dow Jones Industrial Average ինդեքսն իր պատմության մեջ առաջին անգամ հատեց 20.000 արժեքի սահմանը՝ իր կազմում որպես առաջատար ունենալով «Boeing», «Goldman Sachs» և «IBM» ընկերությունները:

Փետրվարի առաջին օրերին ամերիկյան երեք հիմնական ինդեքսները նոր՝ ռեկորդային բարձր արժեքներ գրանցեցին՝ աճն ապահովելով առավելապես նավթագազային և ֆինանսական ընկերությունների հաշվին: Ներդրողները

շարունակում են հետևել Դ.Թրամփի և նախագահական նոր ադմինիստրացիայի հայտարարություններին՝ հատկապես հարկային բարեփոխումների շուրջ մանրամասների ակնկալիքով: Նշենք, որ Դ.Թրամփն իր վերջին ելույթում նշել է, որ

Գրաֆիկ. S&P 500 ինդեքս. 2017թ. հունվար






փետրվարի կեսերին հանդես կգա երկրում գործող հարկային դաշտի վերաբերյալ, ինչպես ինքն է նշել, «ֆենոմենալ» հայտարարությամբ: Արդյունքում ֆոնդային ինդեքսների աճի համար ստեղծվում է բարենպաստ միջավայր:

Հունվար ամսվա ընթացքում մինչև փետրվարի առաջին օրերը ներառյալ ամերիկյան S&P500 ինդեքսը գրանցեց շուրջ 2.5%, Dow Jones Industrial Average-ը՝ 1.8%, իսկ NASDAQ Composite-ը՝ 5.7% աճ՝ հասնելով գործակիցների համապատասխանաբար 2307.87, 20184.01 և 5715.18 ռեկորդային բարձր արժեքների:

Եվրոպա: Եվրոպական ֆոնդային շուկայում 2017թ հունվարին գրանցվել է առավելապես նվազող դինամիկա, մինչդեռ բրիտանական FTSE 100-ն ամսվա առաջին կեսին գրանցել է ակտիվ աճի, իսկ երկրորդ կեսին՝ նվազման դինամիկա: Ամսվա սկզբին տեղի ունեցած իր ելույթում Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ.Մեյը նշեց, որ բրիտանական կառավարությունն ունի հստակ դիրքորոշում ԵՄ-ի հետ Բրեքսիթի շուրջ բանակցությունների գծով: Նա հավելեց, որ առկա է ԵՄ հետ փոխշահավետ համագործակցության հասնելու հնարավորություն, որը Բրիտանիային թույլ կտա պահպանել իմիգրացիայի նկատմամբ վերահսկողությունը, միննույն ժամանակ՝ պահպանելով նեղ տնտեսական կապերը եվրոպական երկրների հետ: Այս հայտարարությունների ֆոնին նվազեց բրիտանական ֆունտի փոխարժեքը, իսկ քանի որ FTSE 100 ինդեքսի կազմում հիմնականում ներառված են դեպի արտասահմանյան շուկա կողմնորոշված ընկերությունները, որոնց վրա ֆունտի ֆոխարժեքի նվազումը դրական է անդրադառնում, ինդեքսի էական աճ գրանցվեց (2.4%) մինչև ռեկորդային 7,338.4 գործակիցը:

Գրաֆիկ. Եվրոպական STOXX 600 ինդեքս. 2017թ հունվար



Գրաֆիկ. Բրիտանական FTSE 100 ինդեքս. 2017թ հունվար





Եվրոպական ինդեքսների վրա զսպող ազդեցություն ունեցավ եվրոպական դեղագործական ոլորտում գնագոյացման վերաբերյալ ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կողմից հնչեցված քննադատությունը, ինչի արդյունքում նվազեցին ոլորտի՝ դեպի ամերիկյան շուկան կողմնորոշված ընկերությունների բաժնետոմսերը:

Հաջորդ գործոնը, որին եվրոպական ինդեքսներն արձագանքեցին նվազման դինամիկայով՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ.Մեյի կողմից հունվարի 17-ին ԵՄ հետ Բրեքսիթի գծով բանակցությունների իր պլանի ներկայացումն էր, որով նա հաստատեց, որ երկիրը կտանի առավելագույնս «կոշտ Բրեքսիթի» ճանապարհով՝ դուրս գալով եվրոպական ընդհանուր շուկայից և Մաքսային միությունից: Միևնույն ժամանակ, կրկին նշվեց, որ ջանքեր են գործադրվելու ԵՄ երկրների հետ փոխշահավետ համաձայնության հասնելու ուղղությամբ: Արդյունքում նվազեցին եվրոպական ինդեքսներն, իսկ բրիտանական FTSE 100-ը մինչ այդ գրանցվող աճից կտուկ հետընթաց դինամիկա գրանցեց՝ նվազելով 1.5%-ով:

Հունվարի 19-ին ԵԿԲ նիստում որոշվեց դրամավարկային քաղաքականությունը թողնել անփոփոխ՝ ավանդադրման տոկոսադրույքը՝ -0.4% մակարդակում, ակտիվների գնման ծրագրի ամսական ծավալը՝ 80 մլրդ եվրո, իսկ ապրիլից՝ 60 մլրդ եվրո մակարդակում: ԵԿԲ նախագահ Մ.Դրագին իր ելույթում հայտարարեց, որ տարածաշրջանում գնաճի ակտիվացում չի տեսնում, իսկ վերջին ամսում գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշը պայմանավորված է էներգակիրների գների աճով:

Այս ֆոնին շարունակվեց ֆոնդային ինդեքսների նվազող դինամիկա գրանցվել: Ամսվա սկզբից մինչ հունվարի 24-ը եվրոպական STOXX 600 ինդեքսի անկումը կազմեց շուրջ 1.4%, Euro Stoxx 50-ինը՝ 1.1%:

Հունվարի 25-26-ին ինդեքսների բարձր տատանողականությունը՝ շուրջ 2% կտրուկ աճն ու այնուհետև նույնքան անկումը, պայմանավորված էր կորպորատիվ հաշվետվությունների հրապարակմամբ, որից հետո շարունակվեց անկումային դինամիկան՝ որպես ԱՄՆ-ում նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության անորոշության և գեոքաղաքական ռիսկերի առկայության հետևանք: ԱՄՆ նախագահի և արտաքին առևտրի գծով վերջինիս խորհրդական Պ.Նավարոյի հայտարարությամբ, եվրոյի փոխարժեքը չափազանց ցածր է, ինչն ԱՄՆ հետ առևտրում վերջինիս դեմ է օգտագործվում: Ընդ որում, Գերմանիայի դիրքորոշումը ներկայացվեց որպես ԱՄՆ և ԵՄ միջև առևտրային համաձայնագրի ստորագրման գլխավոր խոչընդոտ: Այս ֆոնին, եվրոպական ինդեքսների առավել էական անկմանը խոչընդոտեց հրապարակվող դրական մակրոփճակագրությունը:

Փետրվար ամսվա առաջին օրերին եվրոպական ինդեքսների աճը խթանվեց դրական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակման, ԱՄՆ Նախագահի



կողմից երկրի բանկային համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի, ֆինանսական համակարգի կարգավորումն ապահովող Դոդո-Ֆրանկի օրենքի վերանայման վերաբերյալ որոշման կայացման և Չինաստանի տնտեսության վերաբերյալ դրական վիճակագրության հրապարակման ֆոնին: Չինաստանի տնտեսության ակտիվացումը ենթադրում է հումքային ապրանքների նկատմամբ պահանջարկի աճ, ինչը խթանում է եվրոպական լեռնահանքային ընկերությունների թղթերի աճը:

Ողջ հունվար ամսվա կտրվածքով եվրոպական STOXX 600 ինդեքսը նվազել է մոտ 1%-ով, Euro Stoxx 50-ը՝ 1.4%-ով, բրիտանական FTSE 100-ը՝ ամսվա առաջին կեսին աճել 2.5%-ով, երկրորդ կեսին՝ նվազել 2.6%-ով:

ՌԴ: Ռուսաստանյան ֆոնդային շուկան 2016թ-ն ավարտեց կտրուկ աճով՝ խթանվելով նավթ արդյունահանող երկրների միջև նոյեմբերի 30-ին կնքված համաձայնության ֆոնին նավթի աճող գներով: «MMBF» ինդեքսի արժեքն 2017թ հունվարի 1-ին գրանցեց ռեկորդային բարձր՝ 2,284.87 գործակիցը: Մինչ ամսվա վերջին տասնօրյակը, սակայն, ֆոնդային շուկան նվազող դինամիկա դրսևորեց: Նավթի գները չկարողացան պահպանվել ՕՊԵԿ-ի համաձայնության ֆոնին գրանցված մաքսիմումներում՝ 58 դոլար բարելի դիմաց Brent նավթի դեպքում: Թեև շուկայի խոշոր խաղացողները՝ Սաուդյան Արաբիան, ՌԴ-ը կատարել են համաձայնության շրջանակներում իրենց պարտավորությունները, Իրանը շարունակելու է ավելացնել արդյունահանման իր ծավալները, իսկ ամերիկյան արտադրողները նավթի գների աճի արդյունքում սկսել են ավելացնել ակտիվ նավթահորերի թիվը: Արդյունքում անհանգստությունների առաջացան վերջինիս կողմից՝

ՕՊԵԿ-ի համաձայնության արդյունքում նավթի գների աճի էֆեկտի չեզոքացման հավանականության շուրջ, ինչի ֆոնին նավթի շուկայում գնանկում գրանցվեց՝ բացասաբար անդրադառնալով նաև ռուսաստանյան ֆոնդային ինդեքսների վրա: Ինդեքսների աճը զսպեց նաև միջազգային շուկայում հետագա զարգացումների

Գրաֆիկ. Ռուսաստանյան MMBF ինդեքս. 2017թ հունվար



անորոշությունն ԱՄՆ նախագահական նոր ադմինիստրացիայի քաղաքականության սպասումների ֆոնին, ինչը վերաբերում էր նաև ՌԴ նկատմամբ ԱՄՆ կողմից նոր պատժամիջոցների սահմանման հավանականությանը:



Ամսվա վերջին նավթի գների որոշակի աճի, օտարերկրյա ֆոնդային ինդեքսների կայունացման, ինչպես նաև ՌԴ նկատմամբ սահմանված պատժամիջոցները հանելու վերաբերյալ հույսերի առաջացման ֆոնին ֆոնդային շուկայում կտրուկ աճ գրանցվեց: MMBF ինդեքսի աճը գերազանցեց 4%-ը: Շուկայում առևտրային ակտիվությունն աճեց՝ բաժնետոմսերով առևտրի ծավալը հունվարի 27-ին հասնելով 50 մլրդ ռուբլու, որն 2016թ դեկտեմբերի 15-ից հետո գրանցված առավելագույն ցուցանիշն էր: Շուկայում աճի խթան հանդիսացավ նաև ԱՄՆ նախագահի խորհրդական Կ.Քոնուեի կողմից արված հայտարարությունն այն մասին, որ իրենք քննարկում են ՌԴ դեմ պատժամիջոցները հանելու հարցը:

Փետրվարի առաջին օրերին ռուսական ֆոնդային շուկայում աճը կրկին փոխարինվեց անկմամբ: ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի պրոտեկցիոնիստական քաղաքականության ֆոնին, ինչը կարող է ուժգնացնել միջազային գեոքաղաքական լարվածությունը: Բացի այդ, փետրվարի 4-ին երկու երկրների նախագահների միջև տեղի ունեցած հեռախոսազրույցում չգրանցվեց որևէ ակնարկ ՌԴ նկատմամբ պատժամիջոցները վերանայելու առնչությամբ, ինչն իր արտացոլումը գտավ նաև ֆոնդային ինդեքսներում:

Հունվար ամսվա ընթացքում և փետրվարի առաջին օրերին ընդհանուր գնահատմամբ MMBF ինդեքսի արժեքը նվազել է շուրջ 4%-ով, իսկ PTC-ինը՝ 2%-ով:



ՎԵՆԵՍՈՒԵԼԱ: ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՕՊԵԿ-ի անդամ և նավթային ռեսուրսներով առավել հարուստ Վենեսուելայում արդեն մի քանի տասնամյակ անընդմեջ խորացող տնտեսական անկումային իրադրությունը վերջին շրջանում առավել սուր բնույթ է ստացել՝ առաջ բերելով նաև քաղաքական խնդիրներ՝ որպես ահագնացող քաղաքացիական անհանդուրժողականության հետևանք: Ճգնաժամային ծանր իրադրությունը երկրում սկսել է այնպիսի սուր դրսևորումներ ստանալ, ինչպիսիք են կենսականորեն անհրաժեշտ պայմանների՝ սննդամթերքի, խմելու ջրի և էլեկտրաէներգիայի դեֆիցիտը: 2016թ երկրում գրանցվել է գնաճի 800% (YoY) մակարդակ, և, ԱՄՆ կանխատեսմամբ, ընթացիկ տարում այն կհասնի 1600%-ի:

Ճգնաժամի ակունքներում դեռևս 1976թ երկրի նավթային արդյունաբերության ոլորտի ազգայնացումն էր, ինչի նպատակը ոլորտից ստացվող եկամուտների վերադարձն էր


բնակչությանը: Սակայն, պետականացման

արդյունքում, շահույթի ստացմանը ձգտող այն գործարար օղակները, որոնք զբաղվում էին ոլորտի տեխնիկական ապահովմամբ և

սպասարկմամբ կորցրին ոլորտի տեխնոլոգիական ու տեխնիկական բազան զարգացնելու շահագրգռվածությունը: Իսկ առանց վերջինիս հնարավոր չէ նավթաարդյունահանման կազմակերպումն ու նավթի մատակարարումը շուկա: Արդյունքում, որոշ ժամանակ անց ոլորտի տեխնիկական բազան սկսեց շարքից դուրս գալ:

Բացի այդ, չեզոքացավ նավթային ոլորտի զարգացմանը նպաստող ևս մեկ խթան՝ կորստի ռիսկը: Տնտեսության մասնավորեցված համակարգում պատասխանատու անձինք իրենք են կրում իրենց որոշումների հետևանքները: Ճիշտ որոշումներն իրենց հետ շահույթ են բերում, իսկ սխալ որոշումները՝ դառնում վնասաբեր: Իսկ Վենեսուելայի ազգայնացված տնտեսությունը դարձավ անհեռատես քաղաքականության զոհը: Երկրի տնտեսության կարևորագույն ճյուղի ապահոված եկամուտները բաշխվում էին քաղաքական էլիտաների շրջանում, մինչդեռ վնասների դեպքում վերջիններս բաժին էին հասնում բնակչությանը: Արդյունքում նավթաարդյունաբերության ոլորտը դարձավ ոչ կենսունակ, արդյունահանման

Գրաֆիկ. Ինֆլյացիայի մակարդակը Վենեսուելայում. 2015-2016թթ, %, YoY





ծավալները կտրուկ կրճատվեցին: Մինչդեռ մյուս նավթարդյունահանող երկրներն ակտիվորեն աճեցնում էին արդյունահանման ծավալները: 1976թ-ին Վենեսուելայում ոլորտի ազգայնացումից հետո Սաուդյան Արաբիայի կողմից նավթի արդյունահանման ծավալներն աճեցին 25%-ով, Քուվեյթինը՝ 30%-ով, ԱՄԷ-ինը՝ 100%-ով, Կանադայում և Չինաստանում աճը կազմեց համապատասխանաբար 133% և 220%, իսկ Իրաքում՝ 125%: Մինչդեռ Վենեսուելայում գրանցվեց 20%-ոց անկում:

Երբ քաղաքականությունը սահմանափակում է երկրի տնտեսության որևէ հատվածը, անսպասելի հետևանքներ են ի հայտ գալիս նաև այլ հատվածներում: Նավթային արդյունաբերության ազգայնացման չնախատեսված հետևանքը դարձավ արդյունահանման ծավալների կրճատումը: Նավթի համաշխարհային գների նվազման հետ մեկտեղ դա նշանակում էր պետական բյուջե ավելի քիչ քանակությամբ հարկային մուտքեր: Անհրաժեշտ եկամուտներն ապահովելու նպատակով երկրի կառավարությունը սկսեց թղթադրամի էմիսիա իրականացնել, ինչի հետևանքն էլ դարձավ ինֆլյացիան: Վերջինիս դեմ պայքարելու համար գների պետական կարգավորում մտցվեց, ինչի արդյունքն էլ դարձավ պարենամթերքի դեֆիցիտն ու բնակչության կողմից պաշարների կուտակումը: Վերջին խնդրին, իր հերթին, երկրի կառավարությունը փորձեց լուծում տալ սահմանափակելով պարենամթերքի քանակը, որը բնակչությունը կարող է գնել: Արդյունքում բնակչության շատ ավելի ստվար զանգվածի համար սննդամթերքը դարձավ պակաս հասանելի:

Հիպերինֆլյացիայի պայմաններում 2017թ հունվարին երկրում նվազագույն աշխատավարձի մակարդակը բարձրացվեց 50%-ով, ինչը վերջին 12 ամիսների ընթացքում աշխատավարձերի հինգերորդ բարձրացումն էր: Բարձրացվելու են նաև սննդի համար հատկացվող նպաստները:

Երկրում առաջին անհրաժեշտության ապրանքների դեֆիցիտին հանգեցնող մեկ այլ գործոն է Վենեսուելայի և Կոլումբիայի սահմանին հանցավոր խմբավորումների գործունեությունը, որը ենթադրում է վենեսուելական խոշոր թղթադրամներով՝ 100 բոլիվար, երկրի ներսում ցածր գներով՝ պետական ցուբսիդավորմանը ենթակա ապրանքների ձեռքբերում, այնուհետև՝ վաճառք շատ ավելի բարձր գներով Կոլումբիայում: Նշված երևույթի դեմ պայքարելու նպատակով երկրի կառավարությունն 2016թ դեկտեմբերին որոշում ընդունեց խոշոր թղթադրամները շրջանառությունից դուրս բերելու մասին, ինչը, սակայն, հարված հանդիսացավ բնակչության հատկապես անապահով հատվածների համար՝ պատճառ հանդիսանալով զանգվածային անկարգությունների համար:

Վերոնշյալ բոլոր խնդիրներից բացի նախորդ տարում եղանակային չոր պայմաններում էապես նվազեց ՀԷԿ-երի աշխատանքի արտադրողականությունը՝ հանգեցնելով էներգետիկ ճգնաժամի: Մյուս կողմից, էներգետիկ հատվածի, ինչպես և



տնտեսության շատ այլ ոլորտների սուբսիդավորումը հանգեցրեց ոլորտի էֆեկտիվության նվազմանը: Թեև մշակվել են արտադրական հզորությունների նորացման ծրագրեր, սակայն նավթի գների նվազման պայմաններում դրանք քիչ հավանական է որ կիրացվեն: Իսկ մասնավոր ներդրողները մասնավոր սեփականության նկատմամբ պետական ներկայիս վերաբերմունքի, ինչպես նաև ոլորտում չափազանց ցածր սակագների և բնակչության կողմից վարձավճարների չվճարման պայմաններում ոլորտում ներդրումներ կատարելու ցանկություն չեն հայտնի: Քանի որ հովհարային անջատումները բավարար չէին, երկրում բյուջետային աշխատողների համար կրճատվել է աշխատանքային շաբաթը:

Այսպիսով, մակրոտնտեսական քաղաքականության անհեռատես քայլերը հանգեցրին տնտեսական խնդիրների շղթայի ձևավորմանը, որը, առկա արտաքին խնդիրների հետ մեկտեղ երկրում իշխանափոխության իրականացումը դարձնում է ժամանակի խնդիր:



**ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

04 հունվարի	<i>ԱՄՆ ԴՊՀ՝ դեկտեմբերի 14-ի նիստի արձանագրության հրապարակում. դեռևս առկա են մի շարք ռիսկեր, որոնք հնարավոր է՝ ազդեցություն ունենան տարվա ընթացքում տոկոսադրույքի բարձրացումների հաճախականության վրա</i>
17 հունվարի	<i>Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ.Մեյի ելույթ. Բրեքսիթի գծով բանակցությունների պլանը մատնանշում է առավելագույնս «կոշտ Բրեքսիթին», որը ենթադրում է եվրոպական ընդհանուր շուկային և Մաքսային միությանը երկրի անդամակցության դադարեցում</i>
19 հունվարի	<i>ԵԿԲ նիստ: Վերաֆինանսավորման պահպանվեց՝ 0.0% մակարդակում, ավանդադրման տոկոսադրույքը՝ -0.4% մակարդակում, իսկ քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումների ծավալը՝ ամսական 80 մլրդ եվրո մակարդակում</i>
20 հունվարի	<i>ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի երդմնակալության արարողություն</i>
31 հունվարի	<i>Ճապոնիայի Բանկի նիստ: ԴՎՔ բազային տոկոսադրույքը պահպանվեց անփոփոխ՝ -0.1% մակարդակում</i>